



Հարկադիր կատարումն
ապահովող
ծառայության դեմ
դատական գործերի
ուսումնասիրություն

ԶԵԿՈՒՅՑ

Երևան, 2021թ.

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ	3
Դիտարկված գործերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ.....	8
Դատական ծախսերը.....	15
<i>Վարչարարության իրականացման խնդիրներ և առանձնահատկություններ.....</i>	<i>16</i>
<i>Կատարողական վարույթ հարուցելիս Ծառայության պատշաճ վարչարարության խնդիրներ.</i>	<i>17</i>
Արգելանքի սահմանումը համատեղ սեփականություն հանդիսացող գույքի վրա.	22
Պարտապանի կենսաթոշակի վրա բռնագանձման տարածումը այլ գույքի առկայության պարագայում.	23
Հարկադիր էլեկտրոնային աճուրդով արգելադրված գույքը իրացնելու իրավաչափության վիճարկում.	24
Կատարողական վարույթի վերսկսումը օրենքի խախտմամբ.	30
Կատարողական վարույթում կողմերի իրավահաջորդությունը.	32
Անձի նկատմամբ հետախուզում հայտարարելը վերջինիս բնակության վայրը հայտնի լինելու դեպքում.	33
Կատարողական գործողությունների իրականացման երկամսյա ժամկետի խախտումը.	33
Բնակարանից վտարելու հետ կապված հարցեր	35
Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեմ գործերով կայացված կարճման որոշումների ուսումնասիրություն.....	35
Դատական պրակտիկայի և դատալեքս տեղեկատվական համակարգի խնդիրներ և լավագույն պրակտիկա	40
Դատական պրակտիկայի խնդիրներ.....	40
Դատալեքս համակարգի խնդիրները.....	41
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	42



Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական բարեփոխումների խթանում. Հանրային կառավարման որակի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ, թիվ 2020-0183 դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամ կազմակերպության տեսակետների հետ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Իրավունքների պաշտպանություն ատանց սահմանների» հասարակական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից մինչև 2021թ. մարտի 31-ը ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Դատական բարեփոխումների խթանում: Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության¹ դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. ՀՀ վարչական դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 93 վճիռներից 89-ը², ինչպես նաև 135 գործով վարույթի կարճման որոշումներից 58-ը (ընդհանուր՝ 147 գործ):

Մինչ դիտարկման արդյունքների վերջնականացումը հանդիպում է տեղի ունեցել նաև Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացուցիչների հետ: 2021թ. ապրիլի 7-ին Կազմակերպության և ՀԿԱԾ ներկայացուցիչների միջև տեղի ունեցած հանդիպմանը քննարկվել են դուրս բերված խնդիրները և դրանց լուծման շուրջ Ծառայության առաջարկները: Ծառայության դիրքորոշումը կոնկրետ հարցերի շուրջ ևս կներկայացվի զեկույցում:

Դիտարկված գործերից 39-ով (ամբողջի 44%-ը) Դատարանի կողմից հայցերը բավարարվել են (ամբողջությամբ կամ մասնակի):

Դիտարկված գործերը հիմնականում վերաբերել են ոչ իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելուն կամ կիրառված արգելանքը ոչ իրավաչափորեն վերացնելուն /հանրային իրավական դրամական պահանջների կամ դատական ակտերի կատարումն ապահովելու նպատակով վարույթի հարուցման խնդիրներ/, հարկադիր էլեկտրոնային աճուրդով գույքը վաճառելուն, կատարողական վարույթի իրականացման ընթացակարգային խախտումներին, բնակարանից վտարելու իրավաչափությանը, դատական ակտի կատարման անհնարինության հարցերին:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են միանման համակարգային խնդիրներ, որոնց վերաբերյալ ՀՀ վարչական դատարանն ունի արդեն հստակ ձևավորված դիրքորոշում:

Բարձրացված հիմնական իրավունքների խախտումները. Հաշվի առնելով գործերի բնույթը՝ մարդու իրավունքների ապահովման համատեքստում հիմնականում բարձրացվել են հետևյալ իրավունքների առնչությամբ խնդիրները՝ պատշաճ վարչարարություն, այդ թվում՝ լսված լինելու իրավունք, կայացված որոշումներին, փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, օրինականության և որոշակիության սկզբունքներ, սեփականության իրավունք, դատական պաշտպանության իրավունք և այլն:

¹ Հաշվի առնելով նաև ուսումնասիրված գործերի ժամանակագրությունը՝ հետագա տեքստում հնարավոր են Պատասխանող մարմնի անվան՝ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, ԴԱՀԿ տարբերակները, ինչպես նաև Ծառայություն, ՀԿԱԾ հակիրճ տարբերակները և հապավումները:

² Դատալեքս տեղեկատվական համակարգի միջոցով դուրս բերված և իրականում ուսումնասիրված գործերի քանակի տարբերությունները կարող են պայմանավորված լինել գործերի մեծ քանակությամբ, ինչպես նաև Կազմակերպության կողմից 2019-2020թ. այլ ուսումնասիրության ընթացքում արդեն իսկ դիտարկված լինելու հանգամանքով:

Դատական պաշտպանության իրավունքը հատկապես շեշտվել է գույքի վրա արգելանք դնելու որոշումների բողոքարկման գործերով այն հիմքով, որ կատարման է ներկայացվել կա՛մ դեռևս անբողոքարկելի չդարձած վարչական ակտը, կա՛մ այն ակտը, որի իրավաչափությանն առնչվող դատական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտը դեռևս չի մտել օրինական ուժի մեջ:

Առանձին խումբ են կազմել հայցվորներին բնակարանից վտարելու գործողությունների դեմ բերված հայցերը: Այս գործերը մեծամասամբ մերժվում են Դատարանի կողմից՝ նշելով, որ առկա է ուժի մեջ մտած դատական ակտ և Ծառայությունը պարզապես իրականացնում է իր գործառույթները:

Հատկանշական է, որ պատասխանող Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը ընդհանուր առմամբ 58 գործով չի ներկայացել դատական նիստերին, 14 գործով չի ներկայացրել որևէ առարկություն: Հարկ է նշել, որ կոնկրետ խումբ գործերով թե՛ հայցվոր, և թե՛ պատասխանող կողմն ունեն ընդգծված վերաբերմունք, օրինակ՝ դեռևս անբողոքարկելի չդարձած վարչական ակտի կատարմանը վերաբերող 8 գործով հայցվորները, իսկ 7 գործով՝ պատասխանող Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, չեն ներկայացել դատական նիստերին, պատասխանողը նաև չի ներկայացրել որևէ առարկություն, որով կհիմնավորեր վերջինիս պրակտիկան դեռևս անբողոքարկելի չդարձած վարչական ակտը կատարելու ուղղությամբ իրականացված վարչարարության առնչությամբ: Այդ գործերով դատական հայցերը բավարարվել են:

Քանի որ հարկադիր կատարողի գործողությունները վիճարկելիս հայցվորները ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, ՀՀ վարչական դատարանի դատավորները բավարարված հայցերով մեծամասամբ պետական տուրքի հարցը համարել են լուծված: Սակայն 10 գործով Դատավորները ունեցել են այլ մոտեցում: Նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի հիմքով պետական տուրքի վճարումից ազատված են միայն հայցվորները, իսկ հայցը ենթակա է բավարարման՝ Դատարանը գտել է, որ պատասխանողից հօգուտ ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման պետական տուրքի գումարը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կատարողական վարույթ հարուցելիս Ծառայությունը վարչական մարմնի կողմից տրված գրության հիման վրա վարչական ակտի կատարումն ապահովելու համար վարչական վարույթ հարուցելիս և անձանց գույքի վրա արգելանք դնելիս օրենքով սահմանված կարգով պատշաճ չի ուսումնասիրում այն հանգամանքը, թե արդյոք վարչական ակտը հարկադիր կատարման ենթարկելու համար առկա են հիմնական վավերապայմանները, թե՛ ոչ, դրանք են՝ վարչական ակտի ուժի մեջ մտած լինելը, ակտի մասին հասցեատիրոջը սահմանված ընթացակարգով իրազեկելը կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը, ակտի կամովին կատարված չլինելը, անբողոքարկելի դարձած լինելը: Այլ դեպքերում հարկադիր կատարողական վարույթը հարուցված է լինում՝ անտեսելով այն հանգամանքը, որ որոշումը, որը կատարվում է Հարկադիր կատարման ծառայությունում, նույն պահին վիճարկվում է վերադատության կամ դատական կարգով, և առկա չէ գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտ, հաշվի չառնելով նույնիսկ, որ

վարչական ակտի դատական վիճարկման դեպքում կասեցվում է դրա կատարումը: Արձանագրվել է, որ ոչ միշտ է Ծառայությունը ապահովում օրենսդրական պահանջ՝ կատարման ներկայացված ակտին կից գրությունը իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրված և հաստատված լինելու մասով:

Դատարանի կողմից ոչ իրավաչափ է ճանաչվել կատարողական վարույթի հարուցումը նաև այն դեպքերում, երբ վարչական ակտը կատարման է ներկայացվել սահմանված եռամսյա ժամկետից հետո. տվյալ դեպքում Դատարանը գտել է, որ առկա է հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու անհրաժեշտությունը:

Թեև հիմնական վարչարարության խախտումը այս գործերով թույլ է տալիս Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, որը վարույթ հարուցելիս պատշաճ չի ստուգում վերը նշված վավերապայմանները, այնուամենայնիվ խնդրի մյուս կողմում են վարչական մարմինները / ուսումնասիրված դեպքերում՝ ՀՀ ճանապարհային ոստիկանություն, Երևանի քաղաքապետարան, Պետական եկամուտների կոմիտե/, որոնք իրենք էլ չեն իրականացնում պատշաճ վարչարարություն՝ բաց թողնելով կատարման ներկայացնելու ժամկետները կամ սահմանված կարգով չճանուցելով հասցեատերերին, կամ էլ չսպասելով մինչև սահմանված երկամսյա ժամկետի ավարտը՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու համար:

Այլ դեպքերում դատական ակտերի կատարումն ապահովելիս վարչարարության շրջանակներում կատարողական թերթի հիման վրա վարույթ հարուցելիս հարկադիր կատարողը չի ուսումնասիրել կամ հաշվի չի առել գործով պարտապանի՝ դատական ակտի մասին պատշաճ ծանուցված չլինելու և վճիռն օրինական ուժի մեջ մտած չլինելու հանգամանքները:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդով արգելադրված գույքը իրացնելու վերաբերյալ գործերով Դատարանի կողմից հիմնականում արձանագրվել են հարկադիր էլեկտրոնային աճուրդի, գործով փորձագետ նշանակելու մասին որոշման մասին պարտապանին չճանուցելու խնդիր, փորձագետ նշանակելու մասին իրազեկված լինելու, փորձաքննության կամ գնահատման որոշումը, փորձաքննության արդյունքում կազմված փորձագիտական եզրակացությունը կամ այլ փաստաթուղթը գործով հայցվորին չտրամադրվելու, դեռևս օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի կատարման խնդիրներ:

Արձանագրվել է նաև Դատարանի ոչ միատեսակ մոտեցումը, մասնավորապես մի դեպքում Դատարանը գտել է, որ փորձաքննություն նշանակելու մասին որոշման և աճուրդի ներկայացվող լուսի մեկնարկային արժեքի վերաբերյալ ծանուցված չլինելու պայմաններում հայցվորը փաստացի զրկվել է փորձագետի անաչառության վերաբերյալ կասկած հարուցող հանգամանքների առկայության դեպքում իր՝ փորձագետին բացարկ հայտնելու իրավունքից օգտվելու և այլ իրավունքներից, մինչդեռ դիտարկված այլ գործով հայցը մերժվել է՝ նշելով, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվող լուսի գնահատման դեպքում, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթից հետևում է, որ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելի չէ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվող լուսի գնահատման դեպքում:

Բավարարված հայցերի շրջանակներում եղել են նաև մեկական գործեր, որոնցով, սակայն, հայցվորների կողմից բարձրացվել և Դատարանի կողմից հաստատվել են էական հարցեր, ուստի ներկայացնում ենք նաև այդ գործերով Դատարանի կողմից արձանագրված խնդիրները.

➤ կատարողական վարույթի շրջանակներում կատարվող գործողությունների հերթականության ճշգրիտ ապահովման խնդիր. դուրս են բերվել խնդիրներ, երբ հարկադիր կատարողը առանց պարզելու՝ արդյոք անշարժ գույքի նկատմամբ առկա են սահմանափակումներ, այլ անձանց իրավունքներ, թե՛ ոչ, անցել է դրա իրացմանն ուղղված գործողություններին,

➤ կատարողական վարույթի վերսկսումը օրենքի խախտմամբ. դուրս են բերվել դեպքեր, երբ հարկադիր կատարողը վերսկսել է ավարտված կատարողական վարույթն այն դեպքում, երբ բացակայել են դրա համար օրենքով նախատեսված հիմքերը,

➤ արձանագրվել է դեպք, երբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից անձի նկատմամբ հետախուզում է հայտարարվել վերջինիս բնակության վայրը հայտնի լինելու դեպքում,

➤ արձանագրվել է նաև դեպք, երբ կատարողական գործողությունների իրականացման երկամսյա ժամկետը խախտվել է, և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը դրսևորել է անգործություն՝ չապահովելով դատական ակտի կատարումը, ինչը հաստատվել է դատարանի կողմից:

➤ արձանագրվել է համատեղ սեփականություն հանդիսացող գույքի վրա արգելանք դնելու դեպք՝ չնայած օրենքով սահմանված արգելքին,

➤ նույն կերպ արձանագրվել է անձի կենսաթոշակի վրա բռնագանձում տարածելու դեպք, երբ վերջինս սեփականության իրավունքով ունի այլ գույք:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը պատշաճ վարչարարություն իրականացնելու միջոցով կարող է կանխել դատարանի և հենց վարչական մարմնի ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը՝ հատկապես հաճախ կրկնվող խնդիրների կանխման միջոցով: Թեև Վարչական դատարանի կողմից կայացված ակտերը նախադեպային նշանակություն չունեն, այնուամենայնիվ ակնհայտ է, որ կոնկրետ գործերի վերաբերյալ Դատարանն ունի իր հստակ դիրքորոշումը, ուստի հնարավոր է առնվազն մարդկային և ֆինանսական ռեսուրսների երկուստեք խնայման նպատակով չկրկնել վարչարարության այն սխալները, որոնք դատական կարգով արդեն հաստատված են: Հարկ է նշել, որ Կազմակերպության կողմից Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեմ դատական գործերի ուսումնասիրություն իրականացվել է նաև նախորդ տարիներին, ուստի կարող ենք պնդել, որ 2017-2018 թվականներից սկսած մուտքագրված հայցերով բարձրացված խնդիրների զգալի հատված դեռևս կրկնվում է:

Դիտարկված գործերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 93 վճիռներից 89-ը: Դիտարկված գործերից 32-ով (36%) հայցը բավարարվել է ամբողջությամբ, 7-ով (8%)՝ բավարարվել է մասնակի, իսկ 50-ով (56%)՝ մերժվել: Ներկայացված հայցերը, ի թիվս այլնի, վերաբերել են հետևյալ հարցերին.

- ոչ իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելու կամ կիրառված արգելանքը ոչ իրավաչափորեն վերացնելու խնդիրներ՝ 37 գործ,
- հարկադիր էլեկտրոնային աճուրդով գույքը վաճառելու վերաբերյալ հարցեր՝ 20 գործ,
- բնակարանից վտարելու իրավաչափության խնդիրներ՝ 12 գործ,
- կատարողական վարույթի իրականացման ընթացակարգային խախտումներ՝ 18 գործ,
- դատական ակտի կատարման անհնարինության հարցեր՝ 2 գործ:

Հաշվի առնելով գործերի բնույթը, մարդու իրավունքների ապահովման համատեքստում հիմնականում բարձրացվել են հետևյալ իրավունքների առնչությամբ խնդիրները՝ պատշաճ վարչարարություն³, այդ թվում՝ լսված լինելու իրավունք, կայացված որոշումներին, փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, օրինականության, որոշակիության սկզբունքներ⁴, ինչպես նաև սեփականության իրավունք, դատական պաշտպանության իրավունք և այլն: Հարկ է նշել, որ դատական պաշտպանության իրավունքը հատկապես շեշտվել է գույքի վրա արգելանք դնելու որոշումների բողոքարկման գործերով այն հիմքով, որ կատարման է ներկայացվել կա՛մ դեռևս անբողոքարկելի չդարձած վարչական ակտը, կա՛մ այն ակտը, որի իրավաչափությանն առնչվող դատական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտը դեռևս չի մտել օրինական ուժի մեջ:

Դատավորների փոփոխություն տեղի է ունեցել գործերից 7-ով՝ հիմնականում վերջիններիս ամենամյա արձակուրդում գտնվելու կապակցությամբ: Որոշ դեպքերում դատավորի փոփոխության հիմքը Դատալեքս տեղեկատվական կայքում բացակայել է (2 գործ)⁵:

Դիտարկված գործերով հայցերը քննվել են հիմնականում վիճարկման կամ ճանաչման հայցի շրջանակներում: Ճանաչման հայցի շրջանակներում հայցվորները հիմնականում

³ Պատշաճ վարչարարության իրավունքը սահմանվում է ՀՀ սահմանադրության 50-րդ հոդվածով, ըստ որի.

«1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»:

⁴ Վարչարարության սկզբունքները սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխում, դրանք են վարչարարության օրինականությունը, ձևական պահանջների չարաշահման արգելքը, կամայականության արգելքը, վարչարարության համաչափությունը, առավելագույնի սկզբունքը, հավաստիության կանխավարկածը, տնտեսվարությունը:

⁵ Տե՛ս թիվ ՎԴ/1207/05/19, ՎԴ/1375/05/19 գործերը:

խնդրել են ճանաչել հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը, իսկ վիճարկման հայցով՝ անվավեր ճանաչել արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը:

Ոչ իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումների վիճարկման գործերով հայցվորները խնդրել են ճանաչել հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով/18 գործ/, գործերից 9-ով հայցվորները միաժամանակ խնդրել են մասնակի վերացնել գույքի նկատմամբ կիրառված արգելանքի մասով կայացված որոշումները⁶:

Դիտարկված գործերից 79-ով հայցվորը եղել է ֆիզիկական անձ, 8-ով՝ առևտրային կազմակերպություն, իսկ 2 գործով՝ տեղական ինքնակառավարման մարմին՝ Երևան համայնքը:


51 գործով ֆիզիկական անձինք ունեցել են փաստաբան կամ այլ տեսակի ներկայացուցիչ, ինչը դիտարկված գործերի կեսից ավելին է: Հատկանշական է, որ վճիռների զգալի մասից պարզ չի լինում, թե արդյոք ներկայացուցիչը փաստաբան է թե՛ ոչ, այն պարագայում, երբ ներկայացուցչի անունն առկա է փաստաբանների պալատի կայքում որպես փաստաբան, սակայն վճռում դրա մասին նշված չէ: Ֆիզիկական անձ հայցվորները դիտարկված գործերից 28-ով ներկայացուցիչ չեն ունեցել:

Ընդհանուր առմամբ 50 գործով հայցվորը անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկա է գտնվել դատավարությանը, մնացած դեպքերում հայցվորը նիստերին ներկա չի գտնվել կամ դրա մասին նշված չէ վճռում:

Հայցվոր կողմը մասնակցություն չի ապահովել հիմնականում գույքի վրա ոչ իրավաչափորեն արգելանք դնելու կամ հարկադիր էլեկտրոնային աճուրդով արգելադրված գույքը իրացնելու իրավաչափությունը վիճարկելու գործերով: Հայցվորի կամ նրա ներկայացուցչի բացակայությամբ քննված (կամ այն գործերով, որոնցով կողմի մասնակցության մասին նշում չի եղել) 39 գործերից 26-ի դեպքում հայցը մերժվել է, 12-ի դեպքում՝ բավարարվել:

Միևնույն ժամանակ Պատասխանողը դատական գործերից 59-ով չի ապահովել ներկայություն դատական նիստերին, ինչը կազմում է դիտարկված գործերի 65%-ը: Եւս 3 դեպքով վճռից պարզ չէ՝ արդյոք Պատասխանողն ապահովել է ներկայություն, թե՛ ոչ:

⁶ Կատարողական վարույթ հարուցելու իրավահարաբերության բացակայության ճանաչման հայցը քննարկելու հիմքում Դատարանները դրել են ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3540/05/14 վարչական գործով կայացրած որոշումը, ըստ որի՝ թեև անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վարչական ակտ չէ, և դրա վերացման պահանջը չի կարող լինել վիճարկման հայցի առարկա, այդուհանդերձ, այդպիսի որոշման վերացմանն ուղղված պահանջները ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ճանաչման հայցի կանոններով:



Պատասխանողը դատական նիստերին չի ներկայացել հատկապես ոչ իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման վիճարկման գործերով՝ 27 գործ, կամ հարկադիր էլեկտրոնային աճուրդով արգելադրված գույքը իրացնելու իրավաչափության վիճարկման գործերով՝ 10 գործ:

Դիտարկված գործերի մեծամասնության՝ 84%-ի պարագայում ներկայացվել է հայցի պատասխան կամ այլ առարկություն: Պետք է արձանագրել, որ պատասխանողը 14 գործով չի ներկայացրել որևէ առարկություն: Այդ 14 գործերից 7-ը վերաբերել են մեծապես գույքի վրա ոչ իրավաչափորեն արգելանք դնելու մասին որոշման բողոքարկմանը՝ անբողոքարկելի վարչական ակտի կատարումը բողոքարկելու մասով:

7 գործերով պատասխանողը ոչ միայն չի ներկայացրել որևէ առարկություն, որը կհիմնավորեր վերջինիս պրակտիկան դեռևս անբողոքարկելի չդարձած վարչական ակտը կատարելու վարչարարության առնչությամբ, այլ նաև չի ներկայացել դատական նիստերին: Ընդ որում, հետաքրքրական է, որ 7-ից 5-ի դեպքում հայցը բավարարվել է դատարանի կողմից:

Դիտարկված գործերից 71-ի դեպքում (80%) հայցվորն ազատված է եղել պետական տուրք վճարելու պարտականությունից օրենքի ուժով⁷, ևս 3 գործով, չնայած օրենքով սահմանված արտոնությանը, ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն, 2 դեպքերում Դատարանը միջնորդությանը չի անդրադարձել՝ Հայցվորի՝ օրենքով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու հիմքով, իսկ ահա մեկ գործով Դատարանը անդրադարձել և բավարարել է պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը⁸:

Ուշագրավ է, որ 3 գործերից մեկով կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին ՄՊԸ ներկայացուցչի հայցը ի սկզբանե մակագրվել է այլ դատավորի, որն էլ վերադարձրել է հայցադիմումն այն հիմքով, որ չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, բացակայում է դրա


⁷ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի թ/ կետի համաձայն՝ Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով:

⁸ Տե՛ս ՎԴ/4245/05/19 գործը:

վերաբերյալ միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է, իսկ պետական տուրքից ազատելու հնարավորություն կոնկրետ դեպքում օրենսդիրը չի նախատեսել: Կրկին ներկայացված հայքը մակագրվել է այլ դատավորի /հիմքը դատալեքս տեղեկատվական կայքում նշված չէ/, որին կից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն, որը չի քննարկվել Դատարանի կողմից այն հիմքով, որ Հայցվորը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի հիմքով ազատված է պետական տուրքի վճարումից⁹:

Դիտարկված գործերից ընդամենը 5-ի պարագայում է Հայցվորը ներկայացրել բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն, որոնցից 3-ը բավարարվել են՝ դատարանի հասանելիության իրավունքի ապահովման, ինչպես նաև ժամկետը բաց թողնված լինելու վերաբերյալ պատասխանող կողմի ապացույցների բացակայության /հակառակն ապացուցված չլինելու/ հիմնավորումներով, իսկ 2 դեպքում Դատարանը գտել է, որ ներկայացված միջնորդություններն առարկայազուրկ են¹⁰:

Գործերից 28-ի պարագայում հայցադիմումը վերադարձված է եղել: 28 գործից 10-ի պարագայում հայցվորը ներկայացուցիչ չի ունեցել:



Ընդ որում, 2 գործով հայցադիմումը վերադարձվել է 2, իսկ 1 դեպքում՝ 3 անգամ: 3 գործերով էլ Հայցվորներն ունեցել են ներկայացուցիչներ:

- 17 դեպքում հայցադիմումը վերադարձվել է հայցի հիմքի, առարկայի, տեսակի փոփոխման կամ լրացման վերաբերյալ մատնանշում կատարելու հիմքով,
- 14 դեպքում՝ այն հիմքով, որ հայցադիմումին կից չեն ներկայացվել փաստաթղթեր,
- 3 դեպքում՝ այն հիմքով, որ մեկ հայցադիմումում միացված են եղել մեկ կամ մի քանի պատասխանողի ուղղված՝ միմյանց հետ չկապված պահանջներ,
- 2 դեպքում՝ այն հիմքով, որ լրացել է հայցադիմում ներկայացնելու համար սահմանված ժամկետը, և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին,
- 1 դեպքում հայցադիմումը ստորագրված չի եղել:

Ընդ որում, մեկ գործով նույն պահանջով ներկայացված հայցադիմումն առաջին անգամ վերադարձվել է այն հիմքով, որ հայցադիմումին կից առկա չէ հայցադիմումի և դրան կցվող փաստաթղթերի պատճենները պետական ֆինանսական կառավարման մարմնին ուղարկված լինելու վերաբերյալ որևէ ապացույց: Երկրորդ անգամ կրկին ներկայացված հայցադիմումը

⁹ Տե՛ս ՎԴ/1207/05/19 գործը:
¹⁰ Տե՛ս ՎԴ/4245/05/19, ՎԴ/1554/05/19:

վերադարձվել է հայցվորին, այս անգամ նկատելով, որ հայցվորի կողմից ներկայացված պահանջը ձևակերպված է ոչ բավարար հստակությամբ¹¹:

Եվս մեկ գործով Դատարանը առաջին անգամ վերադարձրել է հայցը այն հիմնավորմամբ, որ հայցադիմումը ստորագրված չէ, կամ այն ստորագրել է ստորագրելու լիազորություն չունեցող անձը, երկրորդ անգամ՝ հայցի հիմքի, առարկայի, տեսակի փոփոխման կամ լրացման վերաբերյալ մատնանշում կատարելու հիմքով, իսկ երրորդ անգամ նույն հայցը վերադարձվել է այն հիմքով, որ կրկին ներկայացված հայցադիմումին կցված չէ հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները պետական ֆինանսների կառավարման մարմնին ուղարկված լինելու վերաբերյալ որևէ ապացույց¹²:

Դիտարկված գործերից 27-ի պարագայում Հայցվորը ներկայացրել է հայցի ապահովում կիրառելու միջնորդություն, որոնցից բավարարվել է ընդամենը 8-ը: Ընդ որում՝ 8 գործից 6-ով, որոնք վերաբերել են բնակարանից վտարելու խնդրին, ոչ իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելու հանգամանքի վիճարկմանը, հարկադիր էլեկտրոնային աճուրդով արգելադրված գույքը իրացնելու իրավաչափությանը, հայցերը միննույն է՝ մերժվել են:

Դիտարկված գործերի քննության շրջանակներում հիմնականում նշանակվել է 3 նիստ, ներառյալ՝ վճռի հրապարակումը: Մասնավորապես, 2 նիստ՝ 23 գործով, 3 նիստ՝ 34 գործով, 4 նիստ՝ 16 գործով, 5 նիստ՝ 10 գործով, 5-ից ավելի նիստ՝ 5 գործով: 1 գործով տեղի է ունեցել 13 նիստ, որը վերաբերել է հարկադիր էլեկտրոնային աճուրդով արգելադրված գույքը իրացնելու իրավաչափության վիճարկմանը¹³:

Գործերի դատական քննության միջին տևողությունը եղել է 3-ից 6 ամիս /44 գործ/, 6-ից 12 ամիս /38 գործ/ և 1 տարուց ավելի՝ 7 գործով: Ընդ որում, գործերից ոչ մեկը չի եղել կասեցված:

Դիտարկված ժամանակահատվածում չկայացած նիստերի հիմնական պատճառները եղել են.

- արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումները՝ 3 դեպք,
- դատավորի՝ ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելը՝ 2 դեպք,
- դատավորի վատառողջ լինելը՝ 2 դեպք,
- դատավորի՝ միջազգային գիտաժողովին մասնակցելը՝ 1 դեպք,
- Գործի քննության անհնարինությունը՝ դատավարության մասնակցի բացակայության պատճառով՝ 1 դեպք,
- 1 գործով նիստերը չկայանալու պատճառները նշված չեն եղել¹⁴:

Քննարկված գործերից ընդամենը 3-ի պարագայում է կայացվել արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշում՝ հայցը ակնհայտ անհիմն լինելու հիմքով: Գործերը վերաբերել են.

¹¹ Տե՛ս ՎԴ/6633/05/19 գործը:

¹² Տե՛ս ՎԴ/2840/05/19 գործը:

¹³ Տե՛ս ՎԴ/0361/05/19 գործը:

¹⁴ Տե՛ս ՎԴ/0361/05/19 գործը:

- բնակարանից վտարելու խնդրին, երբ ըստ հայցվորների՝ վերջիններս պատշաճ չեն ծանուցվել վտարման որոշման վերաբերյալ կամ կատարողական թերթը չի համապատասխանել օրենքով սահմանված պահանջներին¹⁵,


- ոչ իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման բողոքարկմանը, երբ ըստ հայցվորների՝ կատարվել է դեռևս օրինական ուժի մեջ չմտած վճիռ¹⁶:

Դիտարկված գործերից 34-ով Դատարանը վարչական գործը վարույթ ընդունելիս որոշմամբ պահանջել է վարչական վարույթի նյութերը: 4 գործով գործի քննության ընթացքում Դատարանը պահանջել է ապացույցներ:

Այս մասով հարկ է նշել, որ գործով վարույթի նյութերի ներկայացումը վարչական մարմնի պարտականությունն է: Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: Այսինքն՝ նույնիսկ առանց Դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման վարչական մարմինը պարտավոր է Դատարան մուտքագրել իր տիրապետման տակ եղած նյութերը գործի հանգամանքների վերաբերյալ:

Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ դատարանի կողմից նման որոշում հաճախ կայացվում է առանձին դատական նիստով՝ տեսնելով, որ վարչական մարմինը ինքնակամ չի ներկայացրել վարույթի նյութերը, մինչդեռ, եթե վարչական մարմինն օրենքով սահմանված այս պարտականությունը կատարի ինքնակամ կամ ապացույց պահանջելու որոշումը կայացվի հայցադիմումը վարույթ ընդունելու որոշման հետ միաժամանակ /ինչը, կարծես, կրկին հիշեցնում է վարչական մարմնին իր պարտականության մասին/, սա թույլ կտա լրացուցիչ ժամանակ խնայել և գործը քննել ողջամիտ ժամկետներում: Հարկ է նշել, որ նմանատիպ խնդիրներ արձանագրվել են Կազմակերպության կողմից նաև 2019-2020թթ մշտադիտարկման շրջանակներում:


Դիտարկված 89 գործերով կայացված վճիռների մոտ 55 տոկոսը բողոքարկվել է վերաքննության կարգով / 47 գործ/:



47 գործից 26-ի դեպքում վերաքննիչ բողոք ներկայացրել է հայցվորը կամ վերջինիս ներկայացուցիչը, 17 դեպքում՝ Պատասխանողի ներկայացուցիչը, 4-ի դեպքում՝ երրորդ կողմը կամ վերջինիս ներկայացուցիչը:

¹⁵ Տե՛ս վճ/5562/05/19, վճ/4388/05/19 գործերը:

¹⁶ Տե՛ս վճ/3136/05/19 գործը:



Պատասխանողի ներկայացուցչի կողմից բողոքներ ներկայացվել են հետևյալ խումբ գործերով Դատարանի կողմից կայացված վճիռների դեմ, որոնցով հայցը Բավարարվել է.

- ոչ իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման բողոքարկում, անբողոքարկելի վարչական ակտի կատարում կամ ակտի կատարման ներկայացվելը սահմանված ժամկետից հետո /6 գործ/,

- հարկադիր էլեկտրոնային աճուրդով արգելադրված գույքը իրացնելու իրավաչափություն, գույքից բաժինն առանձնացնելու մասին գործով վճռի մասին ծանուցված չլինելու, միակ անշարժ գույքը, որի մեկնարկային գինը սահմանվածից ցածր է, իրացնելու խնդիր, փորձագետի եզրակացության մասին իրազեկված լինելու խնդիր /3 գործ/

- կատարողական վարույթի ընթացակարգային այլ խնդիրներին /8 գործ/:

Սակայն մնացած 15 գործերը, որոնցով Դատարանը Բավարարել է հայցը, Պատասխանողը, ըստ էության, ընդունել և չի բողոքարկել Դատարանի վճիռը: Այդ խումբ գործերից 12-ը կրկին վերաբերել են ոչ իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման բողոքարկմանը /անբողոքարկելի չդարձած վարչական ակտի կատարմանը/:

Դիտարկված գործերով Դատարանները վճիռներ կայացնելիս հիմնականում հիմնվել են ներպետական իրավական ակտերի վրա: 15 գործով Դատարանը հղում է կատարել Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին: Իսկ ահա ՄԻԵԴ որոշումներ ցիտել է գործերից 13-ով:


15 գործերից 7-ը, որոնցով Դատարանը հղումներ է կատարել ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին, վերաբերել են բնակարանից վտարելու խնդիրներին: 7 գործով էլ Դատարանը մերժել է հայցը: Դատարանը վճռի հիմքում, ի թիվս այլնի, դրել է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ6/0076/05/12 գործով որոշումը: Դատարանը նաև ցիտել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռ, որով ամրագրվել է իրավական դիրքորոշում այն մասին, որ ՀՀ իշխանությունների կողմից տարիներ շարունակ վճռի պահանջները չկատարելը հանգեցրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռի չկատարումը ազդեցություն է ունեցել նաև դիմումատուի գույքային իրավունքների վրա՝ Եվրոպական դատարանն արձանագրել է նաև Կոնվենցիային կից՝ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում (տե՛ս Դնգիկյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 66328/12 գանգատով ՄԻԵԴ 2017 թվականի հունիսի 15-ի վճիռը)¹⁷:

¹⁷ Տե՛ս, օրինակ, թիվ ՎԴ/5562/05/19 գործը:

Դատարանը նաև ոչ իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման վիճարկման գործերով հայցադիմումները մերժելիս հղում է կատարել ՄԻԵԴ որոշումների վրա, մասնավորապես, Եվրոպական Դատարանը քննելով Խառատյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործը, 01.03.2010 թվականի վճռում նշել է. «Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարան դիմելու իրավունք»-ը, որի ասպեկտներից մեկը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Մինչդեռ այդ իրավունքը կլինե՞ր անիրական, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլինե՞ր, եթե 6-րդ հոդվածի 1-ին կետը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք)՝ առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որն անհամատեղելի կլինե՞ր իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս (տե՛ս, նաև Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 04.09.2002 թվականի վճիռը, կետ 34)»¹⁸:

Դատական ծախսերը.

Բացի պետական տուրքից, դիտարկված գործերից 9-ով Դատարանն անդրադարձել է դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարներին, 3 գործով՝ փոստային ծախսին:



Դիտարկված գործերի շրջանակներում բավարարված 39 դատական գործերից 29-ի դեպքում Դատարանը պետական տուրքի հարցը համարել է լուծված՝ հղում կատարելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի թ/ կետին, որի

¹⁸ Տե՛ս, օրինակ, թիվ ՎԴ/10736/05/19, ՎԴ/11124/05/19, ՎԴ/7503/05/19, ՎԴ/1184/05/20:

համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատված են ֆիզիկական անձինք և ոչ առևտրային կազմակերպությունները՝ դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բաց թողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաև հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով:

Մինևս այն ժամանակ այն գործերով, որոնցով Հայցվորները նախապես վճարել են պետական տուրքի գումարը, Դատարանը գտել է, որ վերջիններս զրկված չեն այդ գումարը հետ պահանջելու հնարավորությունից:

4 գործով Դատարանը թեև վճարված պետական տուրքի գումարը չի դիտել որպես փոխհատուցման ենթակա դատական ծախս, վճռով նշել է, որ նախապես վճարված պետական տուրքի գումարը ենթակա է վերադարձման: 4 գործով պետական տուրքի գումարը կազմել է 32.000 ՀՀ դրամ¹⁹:

10 գործով Դատավորները ունեցել են այլ մոտեցում: Նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի հիմքով պետական տուրքի վճարումից ազատված են միայն հայցվորները, իսկ հայցը ենթակա է բավարարման՝ Դատարանը գտել է, որ Պատասխանողից հոգուտ ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար²⁰: 10 գործով որոշվել է բռնագանձել Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից 40.000 ՀՀ դրամ:

Նման որոշման հիմքում Դատարանը դրել է նույն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին²¹:

Բավարարված գործերից 8-ով, որոնցով ներկայացված են եղել ապացույցներ՝ փաստաբանի կողմից ծառայություններ մատուցված լինելու վերաբերյալ, Դատարանը գնահատել և պարտավորեցրել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը վճարել ընդհանուր առմամբ 390.000 ՀՀ դրամ, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3 գործով Դատարանն անդրադարձել է նաև փոստային ծախսերին՝ պարտավորեցնելով Ծառայությանը վճարել ընդհանուր առմամբ 1160 ՀՀ դրամ՝ որպես փոստային ծառայությունների գումար:

Վարչարարության իրականացման խնդիրներ և առանձնահատկություններ

Դիտարկված գործերով արձանագրվել են վարչարարության իրականացման մի շարք համակարգային բնույթ կրող խնդիրներ, որոնք մեծամասամբ նույնական են Կազմակերպության կողմից նախորդ տարվա ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում դուրս բերված խնդիրներին: Ուսումնասիրված վճիռներից վեր են հանվել հատկապես էլեկտրոնային աճուրդի կազմակերպման, ոչ

¹⁹Տե՛ս, օրինակ, ՎԴ/8860/05/19 գործը:

²⁰Տե՛ս, օրինակ, ՎԴ/2046/05/20, ՎԴ/11227/05/19 գործերը:

²¹ Տե՛ս ՎԴ2/0191/05/19 գործը:

իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելու առնչությամբ դատական գործեր: Դուրս են բերել նաև վարչական մարմնի՝ իր լիազորությունների շրջանակից դուրս գործելու, կամ վարույթի իրականացման շրջանակներում ընթացակարգային խախտումներ թույլ տալու խնդիրներ, որոնք հանգեցրել են անձի նյութական իրավունքի խախտման:

Կատարողական վարույթ հարուցելիս Ծառայության պատշաճ վարչարարության խնդիրներ.

Ընդհանրապես Ծառայության կողմից կատարողական վարույթ հարուցելու համար անհրաժեշտ են՝

ա/ վարչական ակտի կատարման դեպքում՝ ակտը կայացրած մարմնի համապատասխան դիմումը/գրությունը՝ ակտի հարկադիր կատարման վերաբերյալ,

բ/ դատական ակտի հարկադիր կատարման դեպքում՝ դատարանի կողմից դիմումի հիման վրա տրված կատարողական թերթը:

Երկու դեպքում էլ կատարողական վարույթը հարկադիր կատարողը պետք է հետևի դիմումի կամ կատարողական թերթի՝ օրենքի պահանջներին բավարարմանը:

➤ *Հանրային իրավական դրամական պահանջների կատարման ապահովում. վարչական ակտի մասին իրազեկելու խնդիր.*

Այսպես՝ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կատարողական վարույթ հարուցելիս Ծառայությունը վարչական մարմնի կողմից տրված գրության հիման վրա վարչական ակտի կատարումն ապահովելու համար վարչական վարույթ հարուցելիս և անձանց գույքի վրա արգելանք դնելիս պատշաճ չի ուսումնասիրում այն հանգամանքը, թե արդյոք վարչական ակտը հարկադիր կատարման ենթարկելու համար առկա են հիմնական վավերապայմանները թե՛ ոչ, դրանք են՝

- վարչական ակտի ուժի մեջ մտած լինելը,
- ակտի մասին սահմանված ընթացակարգով իրազեկելը կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը,
- ակտի կամովին կատարված չլինելը,
- անբողաքարկելի դարձած լինելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողաքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջները սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հարկադիր կատարման ներկայացնելիս վարչական մարմինը ներկայացնում է դրամական պահանջները հավաստող համապատասխան վարչական ակտը, այդ ակտի մասին սույն օրենքով սահմանված կարգով իրազեկելը կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցները և կատարման վերաբերյալ գրություն:

Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման սույն օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողաքարկելի դառնալուց, իսկ վարչական ակտի

կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձգելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում:

Իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանվում է վարչական գործով որոշման հայտարարման և այն հասցեատիրոջը առձեռն հանձնելու, անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով ծանուցելու կարգը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31.1-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջներին չհամաՊատասխանող, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 2.1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու դեպքերում ներկայացված փաստաթղթերը հարկադիր կատարողը վերադարձնում է վարչական մարմին:

Հատկանշական է, որ ոչ իրավաչափորեն գույքի վրա արգելանք դնելու դեմ բերված 18 հայցերից 13-ը բավարարվել են: 13 գործերով հայցերը բերվել են վարչական կամ դատական ակտի՝ դեռևս ուժի մեջ մտած չլինելու կամ անբողոքարկելի դարձած չլինելու հիմքով, ընդ որում, 8 գործի դեպքում թեև հայցվորը անձամբ կամ ներկայացուցչի միջոցով չի մասնակցել դատավարությանը, հայցը միևնույն է բավարարվել է:

Այս խնդրին առնչվող գործերով վերոգրյալ նորմերին հղում տալով՝ Դատարանը գտել է, որ վարչական ակտը կատարման ներկայացնող մարմնի կողմից /որը մեծապես ճանապարհային ուստիկանությունն է (ՃՈ) կամ Երևանի քաղաքապետարանը/ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն ուղարկված փաստաթղթերը չեն համապատասխանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջներին, մասնավորապես, կատարման վերաբերյալ գրությունից բացի վարչական մարմնին չեն ներկայացվել որոշումների մասին ՎԻՎՕ 283-րդ հոդվածով սահմանված առաջնահերթությամբ և ընթացակարգով իրազեկելը կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը, ինչպես նաև ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող համապատասխան ապացույցները, որպիսի հանգամանքը հաշվի չառնելով Ծառայությունը կայացրել է կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին որոշումներ:

Հարկադիր կատարողը կատարողական գործողություններ իրականացրել է դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի, մասնավորապես՝ ՎԻՎՕ 283-րդ հոդվածով սահմանված կարգով օրինական ուժի մեջ մտնելը հավաստող փաստաթղթերի բացակայության պայմաններում, որպիսի պայմաններում հարկադիր կատարողը պարտավոր էր ներկայացված փաստաթղթերը վերադարձնել համապատասխան վարչական մարմին²²:

ՃՈ կողմից կատարման ներկայացված ակտերի մասով Դատարանը գտել է, որ ՀՀ ուստիկանության «Ճանապարհային ուստիկանություն» ծառայության կողմից որոշումը միայն ՀՀ ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում տեղադրված լինելու փաստը դեռևս բավարար չէ հաստատված համարելու համար, որ հայցվորը նույն որոշման մասին ՎԻՎՕ 283-

²² Տե՛ս, օրինակ, ՎԴ/8860/05/19 ՎԴ/7105/05/19 ՎԴ/0933/05/194, ՎԴ/8174/05/19 ՎԴ/6217/05/19 ՎԴ/4064/05/19 ՎԴ/1334/05/19 գործերը:

րդ հողվածի իմաստով եղել է պատշաճ ծանուցված, քանի որ վարչական վարույթի նյութերում առկա չէ ապացույց առ այն, որ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելը եղել է անհրաժեշտություն և սահմանված կարգով հնարավոր չի եղել որոշումը հանձնել առձեռն, կամ հասցեատերը չի ունեցել պաշտոնական էլեկտրոնային փոստ և գրավոր չի դիմել որոշման մասին իր հայտնած հեռահաղորդակցության միջոցով ծանուցելու խնդրանքով²³:

Ուշագրավ է, որ գործերից մեկով հայցվորը հայտնել է, որ գրանցված լինելով այլ հասցեում, սակայն բնակվելով մեկ այլ հասցեում, դեռևս 2017 թ. հատուկ ՀՀ ՃՈ ծառայությանը տեղեկացրել է, որ մշտապես բնակվում է այլ հասցեում, և խնդրել է իր վերաբերյալ հարուցված վարչական ակտերը ուղարկել նշված հասցեով, ինչը ՀՀ ՃՈ ծառայությունը չի կատարել, դրսևորել է անգործություն, որի հետևանքով խախտվել են իր իրավունքները, և չի կարողացել ծանոթանալ վարչական ակտերին²⁴:

Գործերից մեկով հայցվորը ի պատասխան ՀՀ Կադաստրի կոմիտեին ուղղված հարցմանն ուղարկված գրությունից է տեղեկացել, որ բաժնային սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի նկատմամբ ԴԱՀԿ ծառայության որոշումների հիման վրա կիրառվել է արգելանք: Դատարանը գտել է, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը իրավասու չէր հարուցել կատարողական վարույթներ, քանի որ նշված ակտերի մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելը կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցներ իրեն Ծառայության կողմից ներկայացված չեն եղել, ուստի հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման²⁵:

Հատկանշական է, որ հայցվորներն իրենց գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դրված լինելու մասին տեղեկանում են միայն այն ժամանակ, երբ գործարք են կատարում ՀՀ բանկերում կամ Կադաստրի կոմիտեում, ինչը թերի վարչարարության արդյունք է, որը հանգեցնում է անձանց հիմնարար՝ սեփականության իրավունքի անհիմն խախտման:

➤ *Հանրային իրավական դրամական պահանջների կատարման ապահովում. դեռևս անբողոքարկելի չդարձած վարչական ակտի կատարում.*

Մյուս դեպքերում՝ հարկադիր կատարման վարույթը հարուցված է լինում՝ անտեսելով այն հանգամանքը, որ որոշումը, որը կատարվում է Հարկադիր կատարման ծառայությունում, նույն պահին վիճարկվում է վերադասության կամ դատական կարգով և առկա չէ գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտ՝ հաշվի չառնելով նույնիսկ, որ վարչական ակտի դատական վիճարկման դեպքում կասեցվում է դրա կատարումը:

Այս խումբ գործերով Դատարանն ընդգծել է, որ գործով ձեռք չի բերվել Ծառայության ներկայացված գրությանը կից տվյալ ակտի ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող պատշաճ ապացույց ներկայացված լինելու վերաբերյալ ապացույց: Իսկ Ծառայությունը, առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

²³Տե՛ս, օրինակ, ՎԴ/5677/05/19 գործը:

²⁴Տե՛ս ՎԴ/0841/05/19 գործը:

²⁵Տե՛ս ՎԴ/7141/05/19 գործը:

մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31.1րդ հոդվածով սահմանված կարգով ակտի մասին օրենքով սահմանված կարգով իրագեկելը կամ հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը, ինչպես նաև ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող պատշաճ ապացույցի բացակայության պարագայում պետք է վերադարձնել Ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայության կատարողական վարույթ հարուցելու մասին գրությունը, ինչը, սակայն, չի կատարել՝ հարուցելով կատարողական վարույթ և արգելանք դնելով գույքի վրա²⁶:

Ավելին, գործերից մեկով Դատարանը պարզել է, որ համաձայն datalex.am դատական տեղեկատվական կայքից ստացված տվյալների՝ ՀՀ վարչական դատարանը Երևանի քաղաքապետարանի համապատասխան որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումի ընդունումը մերժել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի որոշմամբ այն արդեն իսկ ճանաչվել է անվավեր: Նշվածը վկայում է այն մասին որ Պատասխանողը, առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31.1րդ հոդվածով սահմանված կարգով խնդրո առարկա ակտի ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող պատշաճ ապացույցի բացակայության պարագայում պետք է վերադարձնել Երևանի քաղաքապետարանի կատարողական վարույթ հարուցելու մասին գրությունը, ինչը, սակայն, չի կատարել՝ հարուցելով կատարողական վարույթ և արգելանք դնելով գույքի վրա²⁷:

✓ Ծառայության ներկայացուցիչների պնդմամբ՝ այս խումբ խնդիրները կարող են առաջանալ մի քանի պատճառով՝

1. մեծաքանակ գործերի առկայություն և վրիպելու հավանականություն,

2. օրենսդրական կարգավորումների ոչ հստակություն. այսպես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով սահմանվում է վարչական ակտի վարչական բողոքարկման ժամկետը՝ 2 ամիս, միևնույն ժամանակ նշվում է, որ այդ ժամկետը բաց թողնելուց հետո վարչական ակտը դառնում է անբողոքարկելի: Այսինքն՝ հոդվածում սահմանված 2 ամիս ժամկետը վերաբերում է միայն վարչական բողոք ներկայացնելու դեպքերին և ոչ թե դատական հայցերի ներկայացմանը:

3. մեծամասամբ ոչ իրավաբան հարկադիր կատարողների առկայություն համակարգում, ինչը կարող է երբեմն հանգեցնել իրավական ակտերի հետ աշխատանքում բարդությունների:

Թեև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են հենց վարչական բողոք բերելու ժամկետները, իսկ 2-րդ մասով սահմանվում է, որ նշված ժամկետում բողոք չներկայացնելու դեպքում նոր վարչական ակտը դառնում է անբողոքարկելի, միևնույն ժամանակ պետք է փաստել, որ դատական պաշտանության իրավունքի և դատարանի մատչելիության իրավունքի տեսանկյունից նույն ժամկետներում անձը հնարավորություն ունի իր բողոքը ներկայացնել ոչ թե վերադաս

²⁶ Տե՛ս ՎԴ/11227/05/19 գործը:

²⁷ Տե՛ս ՎԴ/2046/05/20 գործը:

մարմնին, այլ հենց Դատարան: Իսկ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքում նման անհստակությունը չի կարող մեկնաբանվել ի վնաս անձի: Ուստի առաջարկում ենք օրենսդրորեն հստակեցնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները՝ վարչական ակտի անբողոքարկելի դառնալը կապելով ոչ միայն վարչական, այլ նաև նույն ժամկետում դատական հայց չներկայացնելու փաստի հետ:

➤ *Հանրային իրավական դրամական պահանջների կատարման ապահովում. կատարման ներկայացված ակտին կից գրությունը իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրված և հաստատված չլինելու խնդիր.*

Մեկ այլ գործով Դատարանը, ի թիվս այլնի գտել է, որ Օրենսդիրը՝ որպես պարտադիր վավերապայման սահմանել է, որ դրամական պահանջները սահմանված կարգով հարկադիր կատարման ներկայացնելիս վարչական մարմնի գրությունը պետք է ստորագրված և կնիքով (առկայության դեպքում) հաստատված լինի վարչական ակտն ընդունած վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից:

Գոնկրետ դեպքում հարկադիր կատարողը կատարողական գործողություններ իրականացրել է գրություններին ներկայացվող պահանջների խախտմամբ, քանի որ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանն ուղարկված քննարկվող գրությունը վարչական ակտն ընդունած վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրված և կնիքով (առկայության դեպքում) հաստատված չէ, որպիսի պայմաններում հարկադիր կատարողը պարտավոր էր ներկայացված փաստաթղթերը վերադարձնել համապատասխան վարչական մարմին²⁸:

➤ *Հանրային իրավական դրամական պահանջների կատարման ապահովում. Վարչական ակտի կատարման ներկայացվելը սահմանված եռամսյա ժամկետից հետո.*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման սույն օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց, իսկ վարչական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձգելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում:

Գործերից մեկով Ծառայության կողմից կատարողական վարույթ հարուցելիս հաշվի չի առնվել, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստուգման ակտը հարկադիր կատարման է ներկայացվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետների խախտմամբ: Ուստի, Դատարանը եզրակացրել է, որ Ընկերության նկատմամբ կատարողական վարույթի հարուցումը իրավաչափ չէ, և տվյալ դեպքում առկա է հանրային իրավական դրամական

²⁸ Տե՛ս ՎԴ/8174/05/19 գործը:

պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու անհրաժեշտությունը²⁹:

➤ *Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովելիս վարչարարության խնդիրներ.*

Մեկ այլ դեպքում ՀՀ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը կատարողական վարույթ է հարուցել քաղաքացիական գործով բռնագանձման պահանջի վերաբերյալ բավարարված վճռի կատարման նպատակով այն դեպքում, երբ նշված գործով վճիռը չի մտել օրինական ուժի մեջ: Այսինքն՝ վերը նշված վճռի հիման վրա տրվել է կատարողական թերթ այն պայմաններում, երբ դեռ վճիռը չի տրամադրվել վարչական գործով հայցվոր ընկերությանը, այն ժամանակ, երբ վճիռը դեռ անբողոքարկելի չի դարձել, ուստի օրինական ուժի մեջ մտած չէր կարող լինել: Դատարանը գտել է, որ «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը ընդունվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի սխալ կիրառման և սխալ մեկնաբանման հետևանքով, ուստի Դատարանը գտել է, որ հայցը ենթակա է բավարարման³⁰:

Մեկ այլ գործով Ծառայության կողմից հարուցվել է կատարողական վարույթ և արգելանք է դրվել անձի հաշիվների վրա, ում մասով կատարողական թերթում որևէ պարտավորություն չի սահմանվել: Այսպես՝ Դատարանը գտել է, որ Ծառայությունը, ստանալով բանկի կողմից հարկադիր ծառայություն մուտքագրված կատարողական թերթերը, իրավասու չէր կայացնելու կատարողական վարույթ հարուցելու, պարտապաններից մեկի/ վարչական գործով հայցվորի/ գույքի և դրամական միջոցների հետախուզում հայտարարելու և դրանց վրա արգելանքներ կիրառելու մասին որոշում, քանի որ հարկադիր ծառայությանը ներակայացված կատարողական թերթով սահմանված չէր որևէ պարտավորություն սույն գործով հայցվորի կատարողական թերթով գումարներ բռնագանձվելու հոգուտ պահանջատեր բանկի: Հարկադիր կատարողը ուղղակիորեն հաշվի չի առել այն հանգամանքը, որ կատարողական թերթի բովանդակության մեջ առկա չի եղել հայցվորի համար սահմանված որևէ պարտավորություն, այլ միայն առկա է եղել քաղաքացիական գործով պատասխանողներից մյուսի մասով ամրագրված պարտավորություն, քանի որ հաշտության համաձայնագիրը պահանջատեր բանկի հետ կնքել էր ոչ թե վարչական գործով հայցվորը, այլ՝ միայն մյուս պարտապանը, և միայն վերջինս էր պարտավորվել բանկի հանդեպ կատարելու որոշակի պարտականություններ³¹:

Արգելանքի սահմանումը համատեղ սեփականություն հանդիսացող գույքի վրա.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 47.1-րդ հոդվածով սահմանվում է Բաժնային կամ համատեղ սեփականության մեջ ունեցած պարտապանի բաժնի

²⁹Տե՛ս թիվ ՎԴ/1159/05/19 գործը:

³⁰ Տե՛ս թիվ ՎԴ/1207/05/19 գործը:

³¹ Տե՛ս ՎԴ/1045/05/19 գործը:

նկատմամբ բռնագանձումը տարածելու կարգը, որի 2-րդ մասի համաձայն՝ էթե բաժնային կամ համատեղ սեփականություն հանդիսացող գույքն անշարժ է, ապա բռնագանձումը սույն օրենքով սահմանված կարգով տարածվում է պարտապանին պատկանող բաժնի վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ամուսիններից մեկի պարտավորությունների համար կարող է բռնագանձում տարածվել նրա սեփականության ներքո գտնվող գույքի, ինչպես նաև ամուսինների ընդհանուր գույքում նրա բաժնի վրա:

Գործերից մեկով Ծառայությունը խախտել է նշված կարգը՝ արգելանք տարածելով ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վրա: Դատարանը եզրահանգել է, որ հարկադիր կատարողն, անտեսելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով պարտապանի պարտավորությունների համար բռնագանձում կարող էր տարածվել բացառապես նրա գույքի, ինչպես նաև ամուսինների ընդհանուր գույքում նրան պատկանող բաժնի վրա, արգելանք է դրել նաև պարտապանի կնոջ գույքի վրա՝ այդպիսով դուրս գալով իր լիազորությունների շրջանակից³²:

✓ *Ծառայության ներկայացուցիչների փոխանցմամբ՝ վերը նշված հարցի վերաբերյալ առկա է պրակտիկ խնդիր, քանի որ համատեղ սեփականություն համարվող անշարժ գույքը Կադաստրի կոմիտեում գրանցված է որպես մեկ միավոր, ուստի պարտապանի ամբողջ գույքի վրա է արգելանք դրվում, իսկ բռնագանձում կատարելիս արդեն կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 5-րդ մասի կանոնները:*

Պարտապանի կենսաթոշակի վրա բռնագանձման տարածումը այլ գույքի առկայության պարագայում.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանի աշխատավարձի և այլ տեսակի եկամուտների վրա տարածվում է բռնագանձում, էթե՝

1) պարտապանը չունի գույք, կամ եղած գույքը բավարար չէ բռնագանձվող գումարը լրիվ մարելու համար.

2) կատարվում է պարբերաբար մուծումների բռնագանձման վերաբերյալ վճիռ:

Կոնկրետ գործով հայցվորը, դիմելով Դատարան, նշել է, որ պատասխանողը կայացրել է որոշումներ իր՝ որպես պարտապան, կենսաթոշակի 30% չափով դրամական միջոցների նկատմամբ բռնագանձում տարածելու մասին: Խնդրել է դատարանին վերացնել հիշատակված որոշումները: Հայցվորը նաև նշել է, որ իր կենսաթոշակից ապօրինաբար բռնագանձվել է 14.500 ՀՀ դրամի չափով գումարը և խնդրել է դատարանից պարտավորեցնել պատասխանողին ետ վերադարձնել գումարը: Հայցվորը նշել է, որ կատարողական թերթի հիմքով պատասխանողի

³²Տե՛ս ՎԴ2/0191/05/19 գործը:

կողմից հարուցված թվով 5 կատարողական վարույթների ընթացքում, պատասխանողը խախտել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 56-րդ, 60-րդ հոդվածներով ամրագրված կանոնները և իրականացրել է ոչ իրավաչափ գործողություններ՝ ՀՀ Կառավարության կողմից պետական բյուջեից հայցվորին փոխանցվող կենսաթոշակի 30% չափով դրամական միջոցների նկատմամբ ապօրինաբար կիրառելով արգելանքներ, մինչդեռ կատարողական վարույթների նյութերից հայտնի է, որ ի սկզբանե հայցվորին սեփականության իրավունքով պատկանող և հայտնաբերված չորս միավոր տրանսպորտային միջոցների նկատմամբ դեռևս վարույթների հարուցման օրվանից կիրառված արգելանքները՝ սահմանափակումները, մինչ օրս փաստացի առկա են և պահպանվում են:

Դատարանը գտել է, որ հայցը ենթակա է բավարարման: Այսպես՝ գույքի նկատմամբ իրավունքները պահպանված չլինելու՝ սեփականության իրավունքը դադարած լինելու կամ սեփականության իրավունքով հայցվորին պատկանող գույքի իրացումից բռնագանձման ենթակա գումարի լրիվ մարման համար բավարար չլինելու պայմաններում միայն կարող էր բռնագանձումը տարածվել այլ եկամուտների վրա: Տվյալ պարագայում հայցվորի կողմից կազմված հայտարարագրի համաձայն՝ վերջինիս են պատկանում թվով 4 տրանսպորտային միջոցներ: Դատարանն արձանագրել է, որ տրանսպորտային միջոցների նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքի դադարման վերաբերյալ ապացույցների բացակայության դեպքում բռնագանձումը չէր կարող տարածվել այլ եկամուտների վրա³³:

- ✓ *Հարկ է նշել, որ Ծառայության ներկայացուցիչների հաղորդմամբ՝ վերը նշված խնդիրը՝ կենսաթոշակների հետ կապված, կապված է եղել այն բանի հետ, որ հարկադիր կատարողները վարույթն իրականացնելիս չէին կարողանում տեսնել՝ պարտապանի հաշվին առկա գումարը արդյոք աշխատավարձ, կենսաթոշակ կամ այլ պարբերական վճարումներից է գոյացել, ինչի արդյունքում մի հնարավոր անգամից բռնագանձում էին իրականացնում: Նշվեց նաև, որ վերոնշյալ հարցը կարգավորվել է 2020 թվականին Կառավարության համապատասխան որոշմամբ, ինչի արդյունքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցության արդյունքում կատարողական վարույթ հարուցելու պահին հնարավոր է տեսնել, թե արդյոք կենսաթոշակից են գոյացել պարտապանի հաշվին առկա միջոցները:*

Հարկադիր էլեկտրոնային աճուրդով արգելադրված գույքը իրացնելու իրավաչափության վիճարկում.

Ուսումնասիրված վճիռներից վեր են հանվել հատկապես էլեկտրոնային աճուրդի կազմակերպման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես,

- փորձագետ նշանակելու մասին իրազեկված լինելու խնդիր, փորձաքննության կամ գնահատման որոշումը, գույքի գնահատման եզրակացությունը անձին չտրամադրելու խնդիր, ինչպես նաև փորձաքննության արդյունքում կազմված փորձագիտական եզրակացությունը կամ այլ փաստաթուղթը գործով հայցվորին չտրամադրվելու խնդիր,

³³ Տե՛ս ՎԴ/3552/05/19 վարչական գործը:

- դեռևս օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի կատարման խնդիր,
- գույքից բաժինն առանձնացնելու մասին գործով վճռի մասին ծանուցված չլինելու, միակ անշարժ գույքը, որի մեկնարկային գինը սահմանվածից ցածր է, իրացնելու խնդիր,
- միևնույն ժամանակ գործերի մեծ մասում հայցվորները, ի թիվս այլնի, որպես հայցի հիմքեր են նշել այն հանգամանքը, որ իրենց պատկանող գույքը գնահատվել է շուկայականից ցածր, ինչպիսի հանգամանքի դեմ վերջիններս առարկվելու հնարավորություն չեն ունեցել:

➤ *Հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցման ժամկետներին և բովանդակությանը ներկայացվող պահանջների խախտում.*

Անմիջականորեն հարկադիր աճուրդների կանոնակարգմանը նվիրված է «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ գլուխը, որը ներառում է 29-ից մինչև 35-րդ և 35.1-րդ-ից մինչև 35.4-րդ հոդվածները:

Նույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու նպատակով արգելանք կամ սահմանափակում կիրառելուց հետո, իսկ գույքն առգրավման ենթակա լինելու դեպքում այն առգրավելուց հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, հարկադիր կատարողը «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում որոշում է կայացնում գույքի գնահատման մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում դրա վերաբերյալ որոշումը կայացվում է գույքի գնահատումից հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն օրենքի 35.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) կիրառմամբ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայությունը՝ կատարողական թերթին, ինչպես նաև նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը կայքում հրապարակվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու վերաբերյալ հարկադիր կատարողի որոշման մասին պարտապանին և պահանջատիրոջը պատշաճ ծանուցելուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ աշխատանքային ժամերին, որը պետք է պարունակի սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ և 12-րդ կետերով սահմանված տեղեկությունները:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները. 1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը. 2) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը). 3) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն). 4) աճուրդի ձևը և անցկացման կարգը. 5) աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, եթե լոտն առարկա է, ապա նրա ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) և (կամ) արտադրման տարեթիվը, լոտի մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ

պայմանները. 6) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը. 7) աճուրդում հաղթողին որոշելու կարգը. 8) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները. 9) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը. (...). 12) հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գինը վճարելու կարգը: Աճուրդի կանոնակարգը տրամադրելու համար կազմակերպիչը կարող է պահանջել միայն կանոնակարգի պատճենահանման համար կատարած ծախսերը:

Այն գործերով, որոնցով դատական կարգով հաստատվել է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը կայքում հրապարակվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու վերաբերյալ հարկադիր կատարողի որոշման մասին պարտապանին պատշաճ ծանուցելուց հետո օրենքով սահմանված տասնօրյա ժամկետի խախտմամբ, հայցերը բավարարվել են:

Դատարանը տարբեր գործերով հաստատել է նաև, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումներում բացակայում են աճուրդի ձևի և անցկացման կարգի, աճուրդում հաղթողին որոշելու կարգի, աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի, կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափի, վճարման կարգի և ժամկետների, լոտն ուսումնասիրելու ամսաթիվի, ժամանակի և վայրի վերաբերյալ տեղեկություններն, ինչը նշանակում է, որ դրանք չեն համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին³⁴:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն.

«1. Հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լոտում ընդգրկվող գույքի կազմը և քանակը սահմանում է հարկադիր կատարողը՝ գնահատելով լոտի արժեքը:

Անշարժ գույքի, բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայի), մշակութային արժեքների և գնահատման առումով առավել բարդություններ կայացնող գույքի գնահատումը կատարվում է հարկադիր կատարողի նշանակած գնահատողի միջոցով: Անշարժ գույքի գնահատումն իրականացվում է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով, որոնց ընտրության կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Հարկադիր աճուրդում վաճառվող լոտի մեկնարկային գինը սահմանվում է գնահատված լոտի գնի 75 տոկոսի չափով:

3. Աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին հարկադիր կատարողը պատշաճ ծանուցում է պարտապանին և պահանջատիրոջը (պահանջատերերին)՝ նշելով լոտի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու վերաբերյալ կողմի իրավունքի իրականացման կարգն ու ժամկետները: Եթե միննույն պարտապանի գույքի նկատմամբ առկա են բռնագանձման վերաբերյալ երկու և ավելի կատարողական վարույթներ, ապա պատշաճ ծանուցումն ուղարկվում է տվյալ կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջատերերին: Պարտապանը և պահանջատերն (պահանջատերերը) իրավունք ունեն ծանուցումն իրենց ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ներկայացնելու գրավոր առաջարկություն՝ սահմանելով լոտի ավելի բարձր մեկնարկային գին...»:

³⁴ Տե՛ս վՊ5/0128/05/19, վՊ5/0038/05/19, վՊ/3245/05/19 գործերը:

Դատարանը մի խումբ գործերով գտել է, որ փորձաքննություն նշանակելու մասին որոշման և աճուրդին ներկայացվող լոտի մեկնարկային արժեքի վերաբերյալ ծանուցված չլինելու պայմաններում հայցվորը փաստացի զրկվել է փորձագետի անաչառության վերաբերյալ կասկած հարուցող հանգամանքների առկայության դեպքում իր՝ փորձագետին բացարկ հայտնելու իրավունքից օգտվելու³⁵ իրավունքից, բացի այդ՝ վարչական մարմնի կողմից հայցվորին՝ աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային արժեքի վերաբերյալ պատշաճ ծանուցելու օրենսդրությամբ սահմանված պարտավորության անկատարությամբ, ըստ էության, հայցվորը զրկվել է իրացնելու իր իրավունքը՝ լոտի մեկնարկային գնի մասին պատշաճ ծանուցվելու դեպքում՝ հարկադիր կատարման բաժնի դեպոզիտ հաշվին կամ դրամարկղ համապատասխան վճարում կատարելու և լոտի ավելի բարձր մեկնարկային գին սահմանելու իր իրավունքն իրացնելու Օրենսդրի կողմից սահմանված հնարավորությունից, որպիսի պայմաններում արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացնելով՝ խախտել է օրենսդրությամբ նախատեսված նորմերի պահանջները, որը հանգեցրել է հայցվորի իրավունքների խախտման³⁶:

Սակայն նշված հարցի շուրջ նկատվել է Դատարանի ոչ միատեսակ մոտեցումը, մասնավորապես դիտարկված գործերից մեկով Դատարանը վճռով հայցը մերժել է՝ նշելով, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվող լոտի գնահատման դեպքում, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթից հետևում է, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելի չէ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվող լոտի գնահատման դեպքում («Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվող լոտի գնահատումն իրականացվում է նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով, այսինքն՝ օրենսդիրը սահմանել է, որ վերը նշված դեպքում նշված հոդվածի միայն 1-ին և 2-րդ մասերն են կիրառելի և 3-րդ մասի վերաբերյալ խոսք չկա)³⁷:

✓ Օտոայության ներկայացուցիչների կողմից ևս բարձրացվել է այս խնդրի կարևորությունը՝ նշելով, որ ՀՀ վարչական դատարանում այս խումբ գործերով ցուցաբերվում է ոչ միատեսակ մոտեցում, մասնավորապես՝ Օտոայության ներկայացուցիչների փոխանցմամբ՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը վերաբերվում է բացառապես հարկադիր աճուրդներին: Հարկադիր աճուրդների կանոնակարգմանը նվիրված է Հրապարակային սակարկությունների մասին օրենքի 4-րդ գլուխը, որը ներառում է 29-ից մինչև 35-րդ և 35.1-րդից մինչև 35.4-րդ հոդվածները: Ընդ որում, 29-ից մինչև 35-րդ հոդվածներով կանոնակարգվում է հարկադիր աճուրդը, իսկ 35.1-րդից մինչև 35.4-րդ հոդվածներով՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը, և Օրենսդիրը դրանցից յուրաքանչյուրը դիտարկում է որպես աճուրդի առանձնահատուկ տեսակ այնքանով, որքանով, որ 35.4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է, որ «սույն օրենքի 29-35-րդ հոդվածներով նախատեսված հարկադիր աճուրդները կազմակերպվում և անցկացվում են

³⁵Տե՛ս վճԴ5/0136/05/19 գործը:

³⁶ Տե՛ս վճԴ/6562/05/19, վճԴ5/0136/05/19 գործերը:

³⁷ Տե՛ս վճԴ/5625/05/19 գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախատեսված դեպքերում: Դրան համապատասխան, ընդունվել և գործում է ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 12-ի «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 29-35-րդ հոդվածներով նախատեսված հարկադիր աճուրդների կազմակերպման և անցկացման դեպքերը սահմանելու մասին» որոշումը, որից հետևում է, որ 29-ից մինչև 35-րդ հոդվածներով նախատեսված էլեկտրոնային աճուրդները սույն գործի փաստական հանգամանքներում կիրառելի չեն: Այսինքն՝ տվյալ դեպքում միանշանակ կիրառելի են եղել հարկադիր էլեկտրոնային աճուրդին վերաբերող կետերը, հետևաբար՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում ընդհանրապես չի կարող լինել, քանի որ տվյալ հոդվածի կետն առհասարակ կիրառելի չէ այդ դեպքերում: Ուստի, տվյալ դեպքում չի կարելի նույնացնել «Հարկադիր աճուրդ» և «Հարկադիր էլեկտրոնային աճուրդ» հասկացությունները, օրենսդրի կողմից այս երկու հասկացությունների հստակ տարանջատումը ինքնանպատակ չէ և այս երկու տեսակ աճուրդների վերաբերյալ կիրառելի իրավանդումները նույնպես տարբեր են:

Նշվել է նաև, որ հարցի շուրջ անհրաժեշտ է ՀՀ վճարեկ դատարանի կողմից տրված մեկնարանությունը՝ վերը նշված օրենսդրական նորմերի միատեսակ կիրառության համար, սակայն Ծառայության կողմից այս գործերով մինչ այժմ ներկայացված վճարեկ բողոքները վարույթ չեն ընդունվել:

➤ Կատարողական վարույթի շրջանակներում կատարվող գործողությունների հերթականության ճշգրիտ ապահովման խնդիր.

Ուսումնասիրված գործերից մեկով պարտատիրոջ կողմից Հարկադիր կատարման ծառայություն էր մուտքագրվել կատարողական թերթ, որի համաձայն՝ պարտապանից պետք է գանձվեր որոշակի գումար: Ծառայությունը կատարողական թերթի հիմքով հարուցելով կատարողական վարույթ, պարտապանի անվամբ հայտնաբերել էր անշարժ գույք և տվյալ գույքի շուկայական արժեքը գնահատելու համար կայացրել էր փորձագետ նշանակելու մասին որոշում և մինչև փորձագիտական արդյունքները ստանալը կասեցրել էր կատարողական վարույթը: Միաժամանակ, մինչև որոշում կայացնելը, ծառայությունը հարցում էր կատարել ՀՀ կադաստրի կոմիտե՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի հիմքերը և դրա նկատմամբ կիրառված սահմանափակումները, այդ թվում նաև գրավի պայմանագիրը և գրավի իրավունքի գրանցման վկայականի պատճենը ստանալու պահանջով (դրանց առկայության դեպքում): Այնուհետև, Կադաստրի կոմիտեի կողմից ստացվել էր պատասխան և տրամադրվել էր տեղեկանք այն մասին, որ անշարժ գույքը գրավադրված է բանկում: Ստացվում է, որ ծառայության՝ փորձագետ նշանակելուն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ են եղել, քանի որ նախ՝ հարկադիր կատարողը պետք է պարզեր անշարժ գույքի նկատմամբ առկա են արդյոք սահմանափակումներ, այլ անձանց իրավունքներ, թե՛ ոչ, այնուհետև անցնել դրա իրացմանն ուղղված գործողություններին: Այսինքն՝ Ծառայության կողմից ոչ իրավաչափորեն խախտվել են գործողությունների հաջորդականությունը, ինչի արդյունքում խախտվել են ոչ միայն պարտապանի, այլև պարտատիրոջ իրավունքները:

Դատարանը արձանագրել է, որ վարչական մարմինը իր հետագա գործողությունները կատարողական վարույթի շրջանակներում պատշաճ իրականացնելու համար պետք է սպասեր կատարված հարցման պատասխանին, սակայն չունենալով համապատասխան տվյալները՝ վարչական մարմինը, որոշում է ընդունել նշված անշարժ գույքը գնահատելու նպատակով փորձագետ նշանակելու մասին, իսկ հետագայում Կադաստրի կոմիտեից ստանալով իր հարցման պատասխանը, տեղեկացել է, որ գույքի վրա առկա են արգելանքներ, մինևույն ժամանակ այն հանդիսանում է գրավի առարկա, հետևաբար Դատարանը գտել է, որ պատասխանողի գործողություններն, առանց համապատասխան տվյալների տիրապետման ուղղված փորձագետ նշանակելուն, եղել են ոչ իրավաչափ³⁸:

Մեկ այլ գործով Հարկադիր կատարողի որոշմամբ պարտադրվել է պարտապաններին՝ մինչև սահմանված վերջնաժամկետը քանդել անշարժ գույքին կից ինքնակամ կցակառույցի չքանդված մասերը:

Այնուհետև Ծառայության հարկադիր կատարողի որոշմամբ կատարողական վարույթով նշանակվել է շինարարատեխնիկական փորձաքննություն, որի համար հիմք է հանդիսացել պարտապաններից մեկի դիմումը, որով վերջինս խնդրել է հաշվի առնել այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցին կից շինությունն ամբողջությամբ վթարային վիճակում է, ճաքած են կրող պատերը և քանդման աշխատանքները կարող են բերել անկանխատեսելի հետևանքների: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ պատասխանողներին ինքնակամ կցակառույցի չքանդված մասերը քանդելուն պարտավորեցնելու պահանջի մասին հարուցված կատարողական վարույթը կասեցվել է՝ մինչև վերոնշյալ շինարարատեխնիկական փորձաքննության վերաբերյալ եզրակացություն ստանալը:

Հայցվորի պնդմամբ՝ դատական կարգով արդեն իսկ հաստատվել է այն փաստը, որ ինքնակամ կառույցները քանդելու դեպքում հիմնական շենքին վնաս չի պատճառվի, մինչդեռ տվյալ պարագայում պատասխանողի բողոքարկվող որոշումներով պարտապաններին տրամադրվել է դատական ակտի պահանջը չկատարելու իրավունք, որն ակնհայտ ոչ իրավաչափ է: Դատարանը, գնահատելով գործում առկա ապացույցները, եկել է այն եզրահանգման, որ տվյալ դեպքում կատարողական վարույթով շինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու, կատարողական վարույթը կասեցնելու իրավահարաբերությունները չպետք է ծագեին, քանի որ կատարման ենթակա՝ օրինական ուժի մեջ մտած վերոնշյալ դատական ակտից հետևում է, որ այն կայացվել է՝ արդեն իսկ կատարված փորձագիտական եզրակացությունների հաշվառմամբ, ուստի Դատարանի գնահատմամբ, Ծառայությունը պարտավոր էր ապահովել վճռի հարկադիր կատարումը՝ Օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված կարգով՝ առանց պարտապանի դիմումի հիման վրա փորձագետ (փորձագետներ նշանակելու)³⁹:

³⁸ Տե՛ս վԴ/8360/05/18 գործը:

³⁹ Տե՛ս վԴ/1296/05/19 վարչական գործը:

Դատարողական վարույթի վերսկսումը օրենքի խախտմամբ.

Օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսել է հնարավորություն հաջորդ հերթի գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու մասին, եթե նախորդ հերթի գույքի արժեքը հայցագնի չափին հավասար է կամ գերազանցում է:

Օրենսդրի պահանջը հետևյալն է. հարկադիր կատարողը ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին որոշում կարող է կայացնել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասով թվարկված հիմքերի առկայության դեպքում, այդ թվում՝ նույն օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում պահանջատիրոջ դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ: Իսկ նույն օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ պարտապանը արգելանքն այլ գույքի վրա դնելու կամ հայցագնի չափը գերազանցող գույքը արգելանքից հանելու մասին հարկադիր կատարողին ներկայացվող միջնորդությանը պետք է կցի այլ գույքի կամ արգելադրված գույքի լիկվիդացիոն արժեքի՝ հայցագնի չափը գերազանցելու վերաբերյալ գնահատման եզրակացությունը և միջնորդությունն ու գույքի գնահատման եզրակացությունը պարտատիրոջ կողմից ստանալը հավաստող փաստաթուղթ:

Գործերից մեկով պարտապանը դիմել էր Ծառայությանը՝ իր հաշվին եղած դրամական միջոցներն արգելանքից հանելու և փոխարենը արգելանք դնել հայցագինը գերազանցող պարտապանի սեփականություն հանդիսացող շարժական գույքերի վրա: Ծառայությունը արգելանքը վերացրել էր՝ առանց հաշվի առնելու օրենսդրի իմպերատիվ պահանջը, որի համաձայն՝ գույքն արգելանքից հանելու միջնորդության օրինակը պետք է ուղարկվի նաև պարտատիրոջը, և միջնորդությանը կցվեր պարտատիրոջ կողմից դրա օրինակը ստանալը հավաստող ապացույցը: Բացի այդ, կարևոր հանգամանք է նաև այն, որ միջնորդությանը չէր կցվել շարժական գույքերի գնահատման եզրակացություն, առանց որի չէր կարող Ծառայությունը հավաստիանալ, որ շարժական գույքի արժեքը հայցագնի չափին հավասար է կամ գերազանցում է դրան:

Դատարանը նշված գործով գտել է, որ օրենսդրի կողմից պահանջատիրոջը, գույքի գնահատման եզրակացության մեջ նշված գույքի արժեքի հետ համաձայն չլինելու դեպքում եզրակացության արժանահավատության վերաբերյալ առարկություններ ներկայացնելու իրավունքի նախատեսումը ինքնանպատակ չէ և ուղղված է հարկադիր կատարման ծառայության, որպես վարչական մարմնի կողմից մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով իրեն վերապահված լիազորությունների իրականացման ապահովմանը, որի արդյունքում վարչական մարմինը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ անձի իրավունքների լիարժեք իրացման համար:

Մինևույն ժամանակ ուշագրավ է Դատարանի վերլուծությունը՝ կապված կատարողական վարույթը վերսկսելիս Ծառայության գործողությունների վերաբերյալ: Մասնավորապես՝

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածով օրենսդիրը հստակ սահմանել է հարկադիր կատարողի կողմից կատարման ենթակա այն գործողությունների շրջանակը, որպիսիք պետք է իրականացնել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան ներկայացված միջնորդության դեպքում, այն է՝ պահանջատիրոջ դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին: Սակայն, հարկ է նշել, որ միջնորդությանը կից ներկայացվող փաստաթղթերի մասով խախտումներով ներկայացված միջնորդության դեպքում թեև օրենքում հստակ սահմանված չէ հարկադիր կատարողի կողմից կատարվելիք գործողությունների շրջանակը, այնուամենայնիվ, Դատարանը գտել է, որ հարկադիր կատարողը նման պարագայում պետք է ձեռնպահ մնա նույն օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին որոշում կայացնելու գործողություններից: Դատարանը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով սահմանված է, որ եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա վարչական մարմինը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին: Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա վարչական մարմինը դիմողին առաջարկում է սահմանված ժամկետում համալրել այդ ցանկը⁴⁰:

Մեկ այլ գործով Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը պարտատիրոջ դիմումի հիման վրա վերսկսել էր ավարտված կատարողական վարույթը: Դատարանն արձանագրել է, որ կատարողական վարույթը չէր կարող վերսկսվել քանի որ հարուցված կատարողական վարույթը Հարկադիր կատարողի որոշմամբ ավարտվել էր կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմումի հիմքով⁴¹:

Ընդ որում, հարկ է շեշտել, որ նշված խնդրի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ունի նախադեպային որոշում, որն էլ Դատարանը դրել է վճռի հիմքում: Այսպես՝ Թիվ ՎԴ/0794/05/14 վարչական գործով 22.04.2016 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը կատարողական վարույթն ավարտելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով, իսկ կատարողական վարույթը կասեցնելու հետ կապված իրավահարաբերությունները՝ նույն օրենքի 37-րդ, 38-րդ, 39-րդ հոդվածներով՝ սահմանելով կատարողական վարույթն ավարտելու և կասեցնելու հիմքերը և դրանց իրավական հետևանքները: ... կատարողական վարույթն ավարտելը և կատարողական վարույթը կասեցնելը՝ որպես ընթացակարգային ինստիտուտներ, առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ. Կատարողական վարույթը կասեցնելուց հետո կասեցման հիմք հանդիսացած հանգամանքների վերանայելու դեպքում կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, իսկ կատարողական վարույթն ավարտելու դեպքում, որպես ընդհանուր կանոն, այն չի կարող կրկին վերսկսվել: Նշված ընդհանուր կանոնից

⁴⁰ Տե՛ս ՎԴ/1375/05/19 գործը:

⁴¹ Տե՛ս ՎԴ/6530/05/19 գործը:

բացառությունը նախատեսված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությամբ, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. ավարտված կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել, եթե այն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն: Փաստորեն, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը սահմանել է, որ կատարողական վարույթը կարող է կրկին վերսկսվել միայն հետևյալ երկու դեպքերում. 1. եթե կատարողական վարույթը կասեցվել է, և կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները վերացել են, 2. եթե կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն»:

Կատարողական վարույթում կողմերի իրավահաջորդությունը.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե մահացել է պահանջատեր կամ պարտապան ֆիզիկական անձը, և դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտավորությունները կարող են փոխանցվել նրա իրավահաջորդին:

Նույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե մահացել է պահանջատեր կամ պարտապան քաղաքացին, և դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտականությունները չեն կարող փոխանցվել նրա իրավահաջորդին:

Գործերից մեկով թեև պահանջատերը մահացել էր, ինչի վերաբերյալ պարտապանը դիմում է ներկայացրել Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը, այնուամենայնիվ հարկադիր կատարողը կատարողական վարույթը չի կարճել: Դատարանը գործով արձանագրել է, որ հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե պահանջատեր կամ պարտապան ֆիզիկական անձը մահացել է, իսկ դատական ակտով սահմանված պահանջները կամ էլ պարտավորությունները կարող են փոխանցվել նրա իրավահաջորդին, որպիսի դեպքում կասեցված կատարողական վարույթը վերսկսվում է կասեցումն առաջացրած հանգամանքը վերանալուց, այսինքն՝ իրավահաջորդության հարցի լուծումից հետո: Միաժամանակ հարկադիր կատարողը պետք է կարճի կատարողական վարույթը, եթե պահանջատեր կամ պարտապան քաղաքացին մահացել է, իսկ նրա համար դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտականությունները չեն կարող փոխանցվել նրա իրավահաջորդին, այսինքն՝ այդ դեպքում կատարողական վարույթի կարճման հիմքը մահացած անձի իրավահաջորդության հարցի լուծման անհնարինությունն է: Այն դեպքում, երբ կատարողական վարույթը կասեցվում է վարույթի մասնակցի մահվան հիմքով, որից հետո ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ժամկետում մահացած անձի ժառանգությունը ոչ ոք չի ընդունում, ապա հարկադիր կատարողը պետք է կարճի

այդպիսի վարույթը, քանի որ նման դեպքում դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտականություններն իրավահաջորդի բացակայության հետևանքով չեն կարող փոխանցվել իրավահաջորդության կարգով⁴²:

✓ Ըստ Ծառայության ներկայացուցիչների՝ Օրենքի 42-րդ հոդվածն ուղղակիորեն չի սահմանում, որ իրավահաջորդի բացակայության դեպքում կատարողական վարույթը կարճվում է, ինչն էլ պրակտիկայում կարող է հանգեցնել նման խնդիրների:

Անձի նկատմամբ հետախուզում հայտարարելը վերջինիս բնակության վայրը հայտնի լինելու դեպքում.

Այսպես՝ գործերից մեկով Դատարանն արձանագրել է, որ հարկադիր կատարողն իրավասու է պարտապանի մասին տեղեկություններ չլինելու դեպքում պարտապանի նկատմամբ հետախուզում հայտարարել, սակայն պարտապան ֆիզիկական անձի հետախուզումն իրականացվում է միայն այն դեպքերում, երբ նրա բացակայությունն անհնար է դարձնում կատարողական գործողությունների իրականացումը: Դատարանի համոզմամբ՝ ֆիզիկական անձի բացակայությամբ պայմանավորված կատարողական գործողությունների իրականացման անհնարիությունը նույնպես պայմանավորված է բացառապես ֆիզիկական անձի հետ անմիջականորեն կապված գործողությունների կատարում ակնկալող կատարողական թերթի հետ, սակայն անձից ալիմենտի բռնագանձման գործողությունը ֆիզիկական անձի բացակայության պայմաններում չի կարող դասվել կատարողական գործողությունների իրականացումն անհնար դարձնող դեպքերի շարքին: Առավել ևս, որ տվյալ դեպքում հայցվորը փաստացի բնակության հասցեն հայտնի է և վերջինս կատարողական վարույթին մասնակցում է իր ներկայացուցչի միջոցով, ում օրենքով իրավունք է վերապահված ներկայացվողի անունից կատարել կատարողական վարույթի հետ կապված գործողություններ»:

✓ Ծառայության ներկայացուցիչների փոխանցմամբ՝ մշակվում է հարկադիր կատարմանն առնչվող օրենսդրության փոփոխություններ կատարելու նախագծի փաթեթ, որով նախատեսվում է կարգավորել վերը նշված խնդիրը՝ օրենքում հստակ նշելով, որ հետախուզում հայտարարվում է միայն այն դեպքերում, երբ պարտապանը անհրաժեշտ է հարկադիր գործողությունների համար:

Կատարողական գործողությունների իրականացման երկամսյա ժամկետի խախտումը.

Գործերից մեկով հայցվորը, դիմելով դատարան, նշել է, որ պատասխանողը տարիներ շարունակ դրսևորում է անգործություն և չի կատարում դատարանների կողմից տրված կատարողական թերթերի պահանջները, այդ իսկ պատճառով վարչական դատարանից խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել պատասխանողի անգործությունը: Հայցվորը նշել է, որ 2 տարբեր դատական ակտերով տրվել են կատարողական թերթեր, որոնցից մեկով պետք էր պարտավորեցնել տվյալ դատական ակտով պատասխանողին հայցվորին պատկանող

⁴² Տե՛ս ՎԴ/3507/05/19 գործը:

անշարժ գույքից հանել/տեղափոխել իր շարժական գույքը: Երկրորդ դատական ակտով պատասխանողները պետք է վերականգնեն հայցվորի անշարժ գույքի քանդած միջնորդային պատերը, քանդեին հողամասի տարածքում ապօրինի կառույցը, վերադարձնեին դարպասի բանալիներն իրենց կրկնօրինակներով: Հարկադիր կատարողի կողմից դեռևս 09.12.2008 թվականին և 19.02.2009 թվականին որոշումներ են կայացվել կատարողական վարույթ հարուցելու մասին, սակայն տարիներ շարունակ վճիռների պահանջները չեն կատարվել: Կատարողական գործողությունները կատարելու նպատակով 19.05.2017 թվականի գեկուցագրով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Շիրակի մարզային բաժնից կատարողական վարույթը փոխանցվել է ՀՀ ԴԱՀԿ ծառայության օպերատիվ բաժնի: Միայն օպերատիվ բաժնի աշխատակիցների կողմից կատարված գործողություններից հետո վճիռների պահանջները փաստացի կատարվել են, և կատարողական վարույթները 17.07.2017 թվականին կայացված որոշումներով կարճվել են: Փաստացի կատարողական թերթերի պահանջները կատարվել են դրանք կատարման ներկայացնելուց հետո շուրջ 9 տարի անց:

Դատարանը գտել է, որ հայցը ենթակա է բավարարման, քանի որ տվյալ դեպքում Ծառայության կողմից կատարողական թերթերի պահանջների կատարմանն ուղղված կատարողական գործողություններն իրականացրել է օրենքով սահմանված երկամսյա ժամկետի խախտմամբ, և սույն պարագայում բացակայում են օրենքով նախատեսված այն բացառությունները, որոնց պարագայում կատարողական գործողությունները կարող էին իրականացվել ավելի երկար ժամկետում, քան նախատեսված է օրենքով: Նման պայմաններում Դատարանը եզրահանգել է, որ համապատասխան կատարողական վարույթներով կատարողական գործողություններն իրականացնելիս պատասխանողը դրսևորել է անգործություն⁴³:

Նմանատիպ այլ գործով Դատարանը եզրակացրել է, որ կատարողական վարույթի նյութերով չի հաստատվում կատարողական թերթը փաստացի կատարված լինելու հանգամանքը: Մասնավորապես՝ վիճարկվող «Կատարողական վարույթը կարճելու մասին» որոշումը չի պարունակում որևէ պատճառաբանություն կատարողական թերթի պահանջները կատարված լինելու՝ մինչ շինարարական աշխատանքների եղած դրությունը վերականգնելու վերաբերյալ: Դատարանն, ի թիվս այլնի, արձանագրել է, որ վիճարկվող հասցեում գտնվող շենքի և հարևանությամբ կառուցվող շենքի միջև փաստացի հեռավորությունը հետնամուտքի հարող հատվածում եղել է 0,83 մ-ից 1,1 մ միջակայքում, մինչդեռ ելնելով շենքի հրակայունության III կամ IV աստիճանի բնութագրերին համապատասխանությունից, պետք է կազմի 8-10 մետր, որը տվյալ դեպքում փաստացի պահպանված չէ, ուստի և խախտվում են շինարարական նորմերը, սակայն նման պայմաններում Ծառայության կողմից որոշում է կայացվել կատարողական վարույթը կարճելու վերաբերյալ⁴⁴:

⁴³ Տե՛ս վճԴ5/0094/05/19 գործը:

⁴⁴ Տե՛ս վճԴ/0778/05/19 գործը:

Բնակարանից վտարելու հետ կապված հարցեր


Բնակարանից վտարելու հետ կապված խնդիրների վերաբերյալ գործերով հիմնականում բարձրացված է լինում դատական ակտի բողոքարկելը վարչական մարմնի կողմից հաշվի չառնելու հանգամանքը: Սակայն Դատարանը բոլոր դեպքերում հաստատել է, որ դատական ակտը օրինական ուժի մեջ մտած է եղել, իսկ Ծառայությունը պատշաճ կերպով է իրականացրել վարչարարությունը: Տվյալ հարցերով վարչարարություն իրականացնելիս Ծառայության կողմից որևէ ընթացակարգային խնդիր չի եղել: Այս խումբ գործերով հայցվորները դիմում են դատական պաշտպանության՝ գիտակցելով, որ իրենց իրավունքը չի խախտվել, սակայն նպատակը հայցի ապահովում կիրառելն է և Ծառայության գործողությունները կասեցնելը:

Հարկադիր կատարողի գործողությունների իրավաչափության հիմքում Դատարանը դրել է հետևյալ հիմնավորումները, որ դատական ակտերի հարկադիր կատարման իրավահարաբերությունների շրջանակներում պետությունը պարտավոր է ապահովել ոչ միայն պահանջատիրոջ դատական պաշտպանության և արդար դատաքննության, այլ նաև սեփականության իրավունքը (տե՛ս թիվ ՎԴ6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը): Մասնավորապես վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքը սահմանում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը: Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարման վերաբերյալ ՄԻԵԴ-ի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերվող հայեցակարգային մոտեցման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է և այն չի կարող առանձնացվել արդարադատությունից:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեմ գործերով կայացված կարճաման որոշումների ուսումնասիրություն

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են նաև Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 135 կարճաման որոշումներից 58-ը:

Գործերի գերակշիռ մասով հայցվորները հանդիսացել են ֆիզիկական անձինք՝ կազմելով ընդհանուր գործերի թվի 88% տոկոսը /51 գործ/: Մնացած դեպքերում հայցվոր հանդիսացել են առևտրային կազմակերպությունները՝ 12%:



- Ֆիզիկական անձ է
- անհատ ձեռնարկատեր է
- ոչ առևտրային կազմակերպություն է
- առևտրային կազմակերպություն է / վերաբերելի է նաև այն դեպքերի, երբ հայցը ներկայացրել է տնօրեն՝ կազմակերպության գործունեությունից բխող հարցի շուրջ/

28 գործի /48.2%/ պարագայում ֆիզիկական անձ հայցվորները հանդես են եկել փաստաբան կամ այլ տեսակի ներկայացուցիչներով: 26 գործով ֆիզիկական անձ հայցվորը ներկայացուցիչ չի ունեցել:

Ուսումնասիրված գործերի շրջանակներում հայցադիմումը վերադարձվել է 18 դեպքում, 15 դեպքերում մեկական և 3 դեպքում՝ 2-ական անգամ:

Վերադարձի հիմք հանդիսացել են՝

- *հայցադիմումին կից փաստաթղթեր չներկայացնելը,*
- *հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակից անձանց չուղարկելը,*
- *բավարար չափով հստակ և որոշակի չձևակերպված պահանջ ներկայացնելը:*

Ինչ վերաբերում է փաստաթղթերին, որոնց չներկայացնելու հիմքով հայցադիմումը վերադարձվել է, ապա այդպիսիք հանդիսացել պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը, հայցադիմումը և կից վիճարկվող ակտի պատճենը, լիազորագիր կամ ներկայացուցչի լիազորությունները հավաստող այլ փաստաթուղթ:

Վերադարձվելուց հետո հայցադիմումները և կից փաստաթղթերը ուղղվել և կրկին ներկայացվել են Դատարան:

Սակայն հարկ է շեշտել, որ մեկ գործով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկվել է վերաքննության կարգով: Այսպես՝ Վարչական դատարանը վերադարձրել էր հայցը՝ նշելով, որ հայցվորը խնդրում է անվավեր ճանաչել գործողություններ, ռեալ ակտ, այլ ոչ թե վարչական ակտ, որպիսի հայցատեսակ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով» նախատեսված չէ: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ ներկայացված հայցադիմումը Վարչական դատավարության ՀՀ օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, ենթակա է վերադարձման որպես բավարար չափով հստակ և որոշակի չձևակերպված պահանջ պարունակող հայցադիմում:


Վարչական դատարանը հայցադիմումը վերադարձրել է այն բավարար չափով հստակ չլինելու և որոշակի ձևակերպված չլինելու հիմքով, մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ Դատարանը մատնանշում է հայցադիմում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համարել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև

պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Սույն գործով բավականաչափ հստակ ձևով արձանագրվել է, որ հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել լրիվ հարկադիր էլեկտրոնային աճուրդը, հարկադիր կատարումն ապահովող ծառայության և գնորդի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված անշարժ գույքի սեկսկանության իրավունքի վկայագիրը, ինչն իրենից ենթադրում է վիճարկման հայց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածին համահունչ: Հետևաբար Վարչական դատարանն իրավունք չունեի հայցադիմումի վերադարձման հիմքում դնել հայցապահանջի հստակ և որոշակի չլինելու հանգամանքը՝ խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասը:

Վերաքննիչ Դատարանը գտել է, որ Վարչական դատարանն իրավասու էր հայցադիմումը վերադարձնել միայն ոչ ճիշտ հայցատեսակը ճիշտ հայցատեսակով փոխարինելու հիմքով՝ մատնանշելով հայցադիմումում առկա թերությունը և առաջարկելով ճիշտ հայցատեսակը: Մինչդեռ սույն գործով Վարչական դատարանն այդպես էլ չի որոշել, թե աճուրդի վիճարկման պարագայում հայցվորն ինչ հայցատեսակով պետք է հայց հարուցեր, ինչի պարտականությունը Վարչական դատարանն ուներ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն⁴⁵:

Ուսումնասիրված 58 գործերից 6-ի դեպքում արձանագրվել է ժամկետի բացթողնման դեպք: Որոնցից 2-ը Դատարանը բավարարել է, իսկ 4-ը՝ թողել դատական նիստում քննության:



Հայցվորը օրենքով սահմանված կարգով պետական տուրքի վճարման պարտականությունից ազատված եղել է 37 գործով, ևս 5 գործով հայցվորների կողմից ներկայացվել է պետական տուրքը հետաձգելու կամ պետական տուրքից ազատելու վերաբերյալ միջնորդություն:

1 գործով Դատարանը բավարարել է հայցվորին պետական տուրք վճարելու պարտականությունից ազատելու մասին միջնորդությունը՝ այն հիմքով, որ վերջինս մանկուց հանդիսանում է առաջին խմբի հաշմանդամ և անկարող է իրականացնել աշխատանքային գործունեություն ⁴⁶: 3 գործով բավարարվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու

⁴⁵ Տե՛ս ՎԴ/4803/05/19 գործը:

⁴⁶ Տե՛ս ՎԴ/2679/05/19 գործը:

միջնորդությունը, իսկ մեկ գործով այն թողնվել է առանց քննության, քանի որ Հայցվորն օրենքի ուժով ազատված է եղել պետական տուրք վճարելու պարտականությունից:


Ուսումնասիրված 58 գործերով բարձրացվել է պատշաճ վարչարարության, 40 գործով՝ նաև սեփականության իրավունքի վերաբերյալ հարցեր:

Խնդիրները, որոնց հիմքով ներկայացվել են հայցերը, եղել են տարբեր: Ըստ այդմ, հայցերը ներկայացված են եղել՝

- հարկադիր էլեկտրոնային աճուրդի իրականացմանը ներկայացվող պահանջների առնչությամբ հայցեր՝ 15 դեպք,
- կատարողական վարույթ հարուցելու, գույքի վրա արգելանք դնելու կամ հետախուզում հայտարարելու իրավաչափության առնչությամբ հայցեր՝ 13 դեպք,
- բնակարանից վտարելու առնչությամբ հայցեր՝ 10 դեպք,
- վարույթի ընթացակարգային հարցեր՝ 6 դեպք:

14 դեպքում կարճման որոշումից հնարավոր չի եղել վեր հանել հայցի ներկայացման հիմքը՝ բավարար տվյալների բացակայության պատճառով:

Պատասխանող կողմի կողմից հայցին առարկություններ ներկայացվել են ընդամենը 5 դեպքում (7%): Ընդ որում, մեկ դեպքում ներկայացվել է գրավոր դիմում, մեկ դեպքում՝ բանավոր առարկություն:



6 դեպքում նշվել է, որ առարկություն չի ներկայացվել: Մնացյալ 47 դեպքերում կարճված որոշումներից հնարավոր չի եղել դուրս բերել արդյոք առարկություն ներկայացվել է, թե ոչ:


Գործերի քննությանը երրորդ անձի ներգրավվածությունն եղել է 32 դեպքում: 10 գործի պարագայում երրորդ անձ ներգրավվելու մասին որոշումները դատալեքս տեղեկատվական համակարգում հասանելի չեն եղել: Ընդ որում, մեծամասնության պարագայում՝ 29 գործով, երրորդ անձ ներգրավվել է դատարանի նախաձեռնությամբ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կայացվող դատական ակտով կարող են շոշափվել երրորդ անձի շահերը:

Սակայն 32 դեպքում էլ երրորդ անձիք չեն մասնակցել դատավարությանը:

Ուսումնասիրված գործերով նշանակված դատական նիստերի թիվը եղել է՝

- 13 գործով 2 նիստ (22%)
- 17 գործով 3 նիստ (29%)


- 12 գործով 1 նիստ (21%)
- 5 գործով 4 նիստ (9%)
- 3 գործով 5ն ավելի նիստ (5%)
- 8 գործով նիստ չի կայացել (14%)



Ուսումնասիրված գործերով չկայացած դատական նիստերի պատճառները հետևյալն են՝

- 1 դեպքում դատավորի՝ ամենամյա արձակուրդում գտնվելու պատճառով,
- 1 դեպքում դատավորի՝ անաշխատունակության մեջ գտնվելու պատճառով,
- 1 դեպքում արտակարգ դրությամբ պայմանավորված,
- 2 դեպքում պատճառը հայտնի չէ,
- 2 դեպքում մինչև դատական նիստի կայացումը գործով վարույթը կարճվել է:

Հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո մինչև վերջնական դատական ակտը ընդունելու ժամանակահատվածը միջինը եղել է 2-4 ամիս:



Ուսումնասիրված գործերից որևէ մեկով գրավոր դատաքննության անցնելու որոշում չի կայացվել:

Կարճման մասին որոշումների հիմքերը եղել են՝

- 28 (48%) դեպքում հայցվորը հրաժարվել է հայցից
- 4 դեպքում (7%) վեճը ենթակա չի եղել որևէ դատարանում քննության,
- 3 դեպքում (5%) լրացել է հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը,
- 20 դեպքում (34,5%) վեճն ըստ էության սպառվել է,
- 4 դեպքում (7%) բացահայտվել են սույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը.

Կարճված բոլոր գործերով կայացված դատական ակտերով Դատարանն անդրադարձել է պետական տուրքի հարցին: 2 դեպքում անդրադարձել է նաև դատավարության ներկայացուցիչների դատական ծախսերին: Ընդ որում, Դատարանի կողմից հաստատված ներկայացուցչի վարձատրության չափը եղել է 10.000 և 5.000 ՀՀ դրամ երկու գործերով: Իսկ պետական տուրքի հարցը մեծապես համարվել է լուծված կամ հայցվորի՝ պետական տուրքից ազատված լինելու, կամ վարույթը հայցից հրաժարվելու հիմքով կարճված լինելու պատճառաբանությամբ:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առաջին աստիճանի դատական ակտը 58 գործերից 10-ով բողոքարկվել է վերաքննության կարգով հայցվորների կամ երրորդ անձանց կողմից:

Դատական պրակտիկայի և դատավերք տեղեկատվական համակարգի խնդիրներ և լավագույն պրակտիկա

Դատական պրակտիկայի խնդիրներ.

- Ծառայության դեմ ներկայացված գործերով դատական պրակտիկայի խնդիրները հիմնականում հայցատեսակների դեպքում են: Հաճախ չի հասկացվում, թե ինչ հայցատեսակի շրջանակներում է Դատարանը քննում գործը, ինչը կոնկրետ գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրությունը դարձնում է առավել բարդ: Իսկ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը կարևոր է այնքանով, որ թույլ է տալիս հայցվորներին կողմնորոշվել այս կամ այն հարցի՝ կոնկրետ հայցատեսակի, կոնկրետ պահանջի շրջանակներում քննարկվելու հարցում, ինչը շատ դեպքերում հետագայում հանգեցնում է նաև վերադարձներից խուսափման և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրականացման՝ առանց դատական նիստերի ձգձգումների:

- Որոշ դեպքերում դատական ակտում բացայակում է տեղեկատվությունը դատավարության մասնակիցների և նրանց ներկայացուցիչների՝ դատական նիստին ներկայանալու կամ չներկայանալու մասին:

- Որոշ գործերով արձանագրվել է միևնույն հայցադիմումը մի քանի անգամ տարբեր՝ ձևական և բովանդակային հիմքերով վերադարձնելու խնդիր:

- Նկատվել է Դատարանի ոչ միասնական մոտեցումը հայցվորների՝ պետական տուրքից ազատված լինելու հարցի վերաբերյալ,

- Նկատվել է Դատարանի ոչ միասնական մոտեցումը հայցվորի՝ պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պարագայում պետական տուրքի մասով դատական ծախսերի բեռը պատասխանող կողմի վրա դնելու հարցում:

- Կարճված գործերի պարագայում տեղեկատվությունը որոշման մեջ սահմանափակ է ներկայացված եղել: Մասնավորապես, ներկայացված չեն եղել հայցի փաստական և իրավական հիմքերը, խնդիրը, որի հիմքով ներկայացվել է հայցը, կողմերի դիրքորոշումները, նիստերին ներկայանալու կամ չներկայանալու վերաբերյալ տեղեկատվությունը:

Հատկանշական է, որ դատավորներից մեկն այնուամենայնիվ իր վարույթում առկա գործերի մեծ մասում, որոնցով կայացրել է վարույթը կարճելու մասին որոշում, ներկայացրել է կողմերի դիրքորոշումները, առանձնացրել է գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները և կատարել է համադրված վերլուծություններ, հիմնավորումներ, պատճառաբանություններ՝ տրամադրելով ամբողջական տեղեկատվություն գործերի առնչությամբ:

Դատալեքս համակարգի խնդիրները.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատալեքս համակարգը թերևս միակն է ՀՀ-ում, որտեղ հնարավոր է որոնել, ուսումնասիրել դատական գործերն ու դատական պրակտիկան, ուստի այն հնարավորինս պետք է մատչելի լինի հետազոտողի համար:

Հաճախ գործի մասին նշումների դաշտերում չի նշվում՝ արդյոք կողմերը ներկա են եղել գործով դատական քննությանը: Քանի որ գործերով հայցվորները ներկայացնում էին, որ խախտվել է իրենց լաված լինելու իրավունքը, հնարավորություն չեն ունեցել առարկություն ներկայացնել վարչական վարույթի ընթացքում, կարծում ենք՝ կարևոր է իմանալ նաև, թե անձը, ով սույն հիմքով Դատարան հայցադիմում է ներկայացնում, ինչքան է փաստացի կարևորում իր ներկայությունը, լաված լինելու իրավունքը գործի դատական քննության ընթացքում:

«Դատալեքս» տեղեկատվական համակարգում մշտադիտարկման ընթացքում նկատվել են դեպքեր, երբ հասանելի տեղեկությունը չի տեղադրվել մյուս դատական ակտերի համանմանությամբ: Օրինակ, ակտում առկա է փաստաբան(ներ)ի անունը, սակայն «Դատալեքս»-ի «Դատական գործ» բաժնում բացակայում է «Ներկայացուցիչ» ենթաբաժինը⁴⁷:

Բազմիցս արձանագրվել են դեպքեր, երբ Դատարանը կայացրել է որոշումներ, որոնք, սակայն, հասանելի չեն «Դատալեքս» տեղեկատվական համակարգում, այդ թվում՝ երրորդ անձ ներգրավելու ⁴⁸ հայցի ապահովման միջոցի ձեռնարկման ⁴⁹, ապացույցներ պահանջելու որոշումների տեղադրումը:

Բացի այդ, Դատալեքս տեղեկատվական կայքը քաղաքացիներին հաճախ հասանելի չի եղել, հատկապես շաբաթ և կիրակի օրերին:

Թեև գիտակցում ենք, որ այս պահին բացակայում է իրավական ակտ, որը կկարգավորի դատալեքս տեղեկատվական համակարգում ինֆորմացիայի տեղակայման սահմանները, այնուամենայնիվ նկատում ենք, որ գործող «չգրված կանոնների» համաձայն՝ դատավորների մի/ մեծ մասը պարտադիր կերպով կայացված բոլոր որոշումները տեղադրում են դատալեքս տեղեկատվական հարթակում, այն դեպքում, երբ որոշ դատավորների կամ որոշ գործերի մասին դաշտերը մնում են բաց, ինչը կրկին խանգարում է կոնկրետ տեսակի գործերով դատարանի ընդահանուր մոտեցումը հասկանալուն, ինչը կհանգեցնի դատարանի դիմող անձանց գուցե հետագա սխալներից խուսափելուն և դատարանին անհիմն չձանրաբեռնելուն:

⁴⁷Տե՛ս, օրինակ, ՎԴ/0778/05/19, ՎԴ5/0188/05/19, ՎԴ/9349/05/19, ՎԴ/8589/05/19 գործերը:

⁴⁸Տե՛ս, օրինակ, ՎԴ/10092/05/18, ՎԴ/10078/05/18, ՎԴ/9839/05/18, ՎԴ/1595/05/20, ՎԴ/5261/05/19 գործերը:

⁴⁹Տե՛ս, օրինակ, ՎԴ/0778/05/19, ՎԴ/5522/05/19 ՎԴ/6217/05/19, ՎԴ/5261/05/19 գործերը:

Արձանագրված խնդիրները.

• Հանրային իրավական դրամական պահանջների կատարման ապահովման նպատակով կատարողական վարույթ հարուցելիս Ծառայությունը վարչական մարմնի կողմից տրված գրության հիման վրա վարչական ակտի կատարումն ապահովելու համար վարչական վարույթ հարուցելիս և անձանց գույքի վրա արգելանք դնելիս օրենքով սահմանված կարգով պատշաճ չի ուսումնասիրում այն հանգամանքը, թե արդյոք վարչական ակտը հարկադիր կատարման ենթարկելու համար առկա են հիմնական վավերապայմանները, թե՛ ոչ,

- Արդյո՞ք կատարման նպատակով Ծառայությանը ներկայացված գրությունը համապատասխանում է օրենքով սահմանված պահանջներին:

- Արդյո՞ք վարչական ակտը սահմանված կարգով մտել է օրինական ուժի մեջ,

- Արդյո՞ք վարչական մարմինը ակտի մասին հասցեատիրոջը սահմանված ընթացակարգով իրազեկել կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնել կամ այլ կերպ պատշաճ ծանուցել է,

- Արդյո՞ք վարչական ակտը կամովին չի կատարվել,

- Արդյո՞ք վարչական ակտը սահմանված կարգով դարձել է անբողոքարկելի,

- Արդյո՞ք վարչական ակտը կատարման ներկայացնողի կողմից բաց չի թողնվել՝ ակտը կատարման ներկայացնելու համար սահմանված եռամսյա ժամկետը:

• Թեև հիմնական վարչարարության խախտումը այս գործերով թույլ է տալիս Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, որը վարույթ հարուցելիս պատշաճ չի ստուգում վերը նշված վավերապայմանները, այնուամենայնիվ խնդրի մյուս կողմում են վարչական մարմինները /ուսումնասիրված դեպքերում՝ ՀՀ ճանապարհային ոստիկանություն, Երևանի քաղաքապետարան, Պետական եկամուտների կոմիտե/, որոնք իրենք էլ չեն իրականացնում պատշաճ վարչարարություն՝ բաց թողնելով կատարման ներկայացնելու ժամկետները կամ սահմանված կարգով չծանուցելով հասցեատերերին, կամ էլ չապաստելով մինչև սահմանված երկամսյա ժամկետի ավարտը՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու համար:

• Ուսումնասիրված վճիռներից վեր են հանվել հատկապես էլեկտրոնային աճուրդի կազմակերպման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես,

- հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցման հրապարակումը կայքում հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու վերաբերյալ հարկադիր կատարողի որոշման մասին պարտապանին պատշաճ ծանուցելուց հետո օրենքով սահմանված տասնօրյա ժամկետի խախտմամբ,

- հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումներում աճուրդի ձևի և անցկացման կարգի, աճուրդում հաղթողին որոշելու կարգի, աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի, կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափի, վճարման կարգի և ժամկետների, լոտն ուսումնասիրելու ամսաթիվի, ժամանակի և վայրի վերաբերյալ տեղեկությունների բացակայություն, ինչը նշանակում է, որ դրանք չեն համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին:

- լուտի մեկնարկային արժեքի, փորձագետ նշանակելու մասին իրազեկված լինելու խնդիր, փորձաքննության կամ գնահատման որոշումը, գույքի գնահատման եզրակացությունը անձին չտրամադրելու խնդիր, ինչպես նաև փորձաքննության արդյունքում կազմված փորձագիտական եզրակացությունը կամ այլ փաստաթուղթը գործով հայցվորին չտրամադրվելու խնդիր:

- Բավարարված հայցերի շրջանակներում եղել են նաև մեկական գործեր, որոնցով սակայն հայցվորների կողմից բարձրացվել և Դատարանի կողմից հաստատվել են էական հարցեր, ուստի ներկայացնում ենք նաև այդ գործերով Դատարանի կողմից արձանագրված խնդիրները.

- դատական ակտի հարկադիր կատարումն ապահովելիս Ծառայության կողմից կատարողական վարույթ է հարուցվել քաղաքացիական գործով բռնագանձման պահանջի վերաբերյալ բավարարված վճռի կատարման նպատակով այն դեպքում, երբ նշված գործով վճիռը չի մտել օրինական ուժի մեջ,

- Ծառայության կողմից հարուցվել է կատարողական վարույթ և արգելանք է դրվել անձի հաշիվների վրա, ում մասով կատարողական թերթում որևէ պարտավորություն չի սահմանվել,

- կատարողական վարույթի շրջանակներում կատարվող գործողությունների հերթականության ճշգրիտ ապահովման խնդիր. դուրս են բերվել խնդիրներ, երբ հարկադիր կատարողը առանց պարզելու՝ արդյոք անշարժ գույքի նկատմամբ առկա են սահմանափակումներ, այլ անձանց իրավունքներ, թե՛ ոչ, անցել է դրա իրացմանն ուղղված գործողություններին,

- կատարողական վարույթի վերսկսումը օրենքի խախտմամբ. դուրս են բերվել դեպքեր, երբ հարկադիր կատարողը վերսկսել է ավարտված կատարողական վարույթն այն դեպքում, երբ բացակայել են դրա համար օրենքով նախատեսված հիմքերը,

- արձանագրվել է դեպք, երբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից անձի նկատմամբ հետախուզում է հայտարարվել վերջինիս բնակության վայրը հայտնի լինելու դեպքում,

- արձանագրվել է նաև դեպք, երբ կատարողական գործողությունների իրականացման երկամսյա ժամկետը խախտվել է, և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը դրսևորել է անգործություն՝ չապահովելով դատական ակտի կատարումը, ինչը հաստատվել է դատարանի կողմից,

- մեկ գործով արձանագրվել է համատեղ սեփականություն հանդիսացող գույքի վրա արգելանք դնելու դեպք՝ չնայած օրենքով սահմանված արգելքին,

- նույն կերպ արձանագրվել է անձի կենսաթոշակի վրա բռնագանձում տարածելու դեպք, երբ վերջինս սեփականության իրավունքով ունի այլ գույք:

Դատական պրակտիկայի խնդիրներ.

- Նկատվել է Դատարանի հակասական պրակտիկան հարկադիր աճուրդների և հարկադիր էլեկտրոնային աճուրդների առնչությամբ նորմերի փոխադարձ կիրառելիության վերաբերյալ. մասնավորապես մի դեպքում Դատարանը գտել է, որ փորձաքննությունն նշանակելու մասին որոշման և աճուրդի ներկայացվող լուտի մեկնարկային արժեքի

վերաբերյալ ծանուցված չլինելու պայմաններում հայցվորը փաստացի գրկվել է փորձագետի անաչառության վերաբերյալ կասկած հարուցող հանգամանքների առկայության դեպքում իր՝ փորձագետին բացարկ հայտնելու իրավունքից օգտվելու և այլ իրավունքներից և բավարարել հայցը, մեկ այլ գործով Դատարանը հայցը մերժել է՝ նշելով, որ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելի չէ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվող լուտի գնահատման դեպքում:

- մեկ գործով Վարչական դատարանը վերադարձրել էր հայցը՝ նշելով, որ հայցվորը խնդրում է անվավեր ճանաչել գործողություններ, ռեալ ակտ, այլ ոչ թե վարչական ակտ՝ չմատնանշելով, թե աճուրդի վիճարկման պարագայում հայցվորն ինչ հայցատեսակով պետք է հայց հարուցեր, ինչի պարտականությունը Վարչական դատարանն ուներ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն:

- Որոշ դեպքերում դատական ակտում բացայակում է տեղեկատվությունը դատավարության մասնակիցների և նրանց ներկայացուցիչների՝ դատական նիստին ներկայանալու կամ չներկայանալու մասին:

- Որոշ գործերով արձանագրվել է միևնույն հայցադիմումը մի քանի անգամ տարբեր՝ ձևական և բովանդակային հիմքերով վերադարձնելու խնդիր:

- Նկատվել է Դատարանի ոչ միասնական մոտեցումը ինչպես հայցվորների՝ պետական տուրքից ազատված լինելու հարցի վերաբերյալ, այնպես էլ հայցվորի՝ պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պարագայում պետական տուրքի մասով դատական ծախսերի բեռը պատասխանող կողմի վրա դնելու հարցում:

Դատալեքս համակարգի խնդիրներ.

- Պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու վերաբերյալ արձանագրային որոշումների հրապարակայնության վերաբերյալ դատավորների մոտ միասնական պրակտիկա չի գործում: Քանի որ որոշ դեպքերում այդ որոշումները հասանելի են դատալեքս տեղեկատվական համակարգում, որոշ դեպքերում՝ ոչ:

- Նման պրակտիկա նկատվել է նաև հայցի ապահովման միջոց կիրառելու որոշումների առնչությամբ:

- Մի շարք գործերով դատալեքս տեղեկատվական համակարգում հասանելի չեն եղել նաև երրորդ անձ ներգրավելու մասին դատարանի որոշումները:

- կարճված գործերի մասով տեղեկատվությունը որոշման մեջ սահմանափակ է ներկայացված եղել: Մասնավորապես ներկայացված չեն եղել հայցի փաստական և իրավական հիմքերը, խնդիրը, որի հիմքով ներկայացվել է հայցը, կողմերի դիրքորոշումները, նիստերին ներկայանալու կամ չներկայանալու վերաբերյալ տեղեկատվությունը: Հատկանշական է, որ դատավորներից մեկն այնուամենայնիվ իր վարույթում առկա գործերի մեծ մասում, որոնցով կայացրել է վարույթը կարճելու մասին որոշում, ներկայացրել է կողմերի դիրքորոշումները, առանձնացրել է գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները և կատարել է համադրված վերլուծություններ, հիմնավորումներ, պատճառաբանություններ՝ տրամադրելով ամբողջական տեղեկատվություն գործերի առնչությամբ:

Առաջարկներ

➤ Հաշվի առնելով նաև Դատարանի հստակ դիրքորոշումն հանրային իրավական դրամական պահանջների վերաբերյալ գործերով՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել.

✓ Ծառայության աշխատակիցներին նշված դատական ակտերի մասին իրազեկելու, վերջիններիս կողմից վարույթ հարուցելիս նշված հանգամանքների նկատմամբ առավել ուշադիր լինելու վերաբերյալ, քանի որ օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված է պահանջ՝ ստուգել վերը նշված պարտադիր վավերապայմանները՝ կատարողական վարույթ հարուցելուց առաջ,

✓ Ապահովելու, որ Հարկադիր կատարողները իրազեկված լինեն կատարողական վարույթի շուրջ իրավական կարգավորումների վերաբերյալ՝ թույլ չտալով անձանց հիմնարար իրավունքների խախտումներ,

✓ Ապահովելու Հարկադիր ծառայողների կողմից կատարողական վարույթ հարուցելիս անհրաժեշտ պայմանների առկայության մանրակրկիտ ուսումնասիրություն՝ բացառելով անձանց սեփականության և դատական պաշտպանության իրավունքների անհիմն սահմանափակումները,

✓ Ներդնելու այլ վարչական մարմինների հետ համագործակցության և առավել արդյունավետ հաղորդակցության ուղիներ՝ նմանատիպ խնդիրներից խուսափելու, այդ թվում՝ վարչական ակտերի՝ բողոքարկված լինելու մասին իրազեկվելու նպատակով,

✓ Օրենսդրությամբ հստակեցնելու վարչական ակտի անբողոքարկելու դառնալու ժամկետը՝ վարչական ակտի անբողոքարկելի դառնալը կապելով ոչ միայն վարչական, այլ նաև նույն ժամկետում դատական հայց չներկայացնելու փաստի հետ:

➤ Անհրաժեշտ է ապահովել հարկադիր աճուրդին և հարկադիր էլեկտրոնային աճուրդին վերաբերող՝ նշված օրենսդրական նորմերի միատեսակ կիրառությունը:

➤ Հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով՝ կատարողական թերթ կարող է տրվել և դրա հիման վրա կատարողական վարույթ կարող է հարուցվել միայն վճիռը՝ դատական իշխանության պաշտոնական կայքում տեղադրելու պահից հետո մեկամսյա ժամկետի / պարզեցված վարույթի պարագայում այդ ժամկետը 15-օրյա ժամկետն է/ ավարտից հետո, մինչև նույն ժամանակ հնարավոր են իրավիճակներ / պրակտիկայում շատ հաճախ/, երբ դատական ակտը դատալեքս դատական տեղեկատվական հարթակում տեղադրվում է հրապարակման համար սահմանված օրից ուշացումով, անհրաժեշտ է մշակել ներքին հաղորդակցության մեխանիզմներ՝ Հարկադիր կատարողներին հնարավորություն տալով տեղեկանալու դատական ակտերի հրապարակման իրական ժամկետներին՝ այդպիսով խուսափելով անհարկի դատական բողոքարկումներից:

➤ Ապահովել Դատարանի միասնական քաղաքականությունը՝ անձանց պետական տուրքից ազատելու, այդ դեպքում պետական տուրքի մասով դատական ծախսերի բաշխման առնչությամբ:

➤ Բարձրագույն դատական խորհրդին՝ սահմանել գործավարության պարտադիր պահանջներ՝ ապահովելու դատական գործերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը: